«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ ԱՆՎԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՅԻՈՆԱԼ
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2024

## ՆԱԽԱԲԱՆ

Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի (այսուհետ՝ ՄՈՒՀ կամ քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումի համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգում և իրականացնում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» (ՈԱԱԿ) հիմնադրամը: Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959-Ն որոշմամբ: Գնահատումը կատարվել է ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից: Հավատարմագրման գործընթացն իրականացվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ֆինանսավորմամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ՆԱԽԱԲԱՆ....2
ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ....4
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....6
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....13
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....13
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....13
ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....16
I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....16
II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....18
III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....22
IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....28
V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....32
VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....35
VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....39
VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....43
IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....45
X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....49
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....53
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....53
ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....54
ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....55
ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....57
ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....58
ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....58

## ՄՈՒՀ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏԸ

*Այս բաժնի նպատակն է ծանոթացնել ընթերցողին ՄՈՒՀ-ի գործունեության համատեքստին՝ տրամադրելով տեղեկատվություն գործունեության միջավայրի, կրթական ծրագրերի և գնահատման գործընթացը պայմանավորող այլ առանցքային ուղղությունների մասին: Չափանիշներում ներկայացվող փաստերն ու դատողությունները կառուցվել են՝ հաշվի առնելով ՄՈՒՀ-ի գործունեության արտաքին համատեքստը և ներքին միջավայրը:*

**ՄՈՒՀ-ի գործունեությունը և պատմությունը**

ՄՈՒՀ-ը հիմնադրվել է 1929թ. և անվանվել «Անասնաբուծական-անասնաբուժական տեխնիկում»: 1946թ. ուսումնական հաստատությանը շնորհվել է նշանավոր գիտնական, կաթնատնտես պրոֆեսոր Ա. Քալանթարի անունը: Ուսումնական հաստատությունը այս տարիներին մի քանի անգամ կրել է անվանափոխություններ: 1995թ. հուլիսին, ուսումնական հաստատությունը վերակազմավորվել է որպես գյուղատնտեսական քոլեջի: Վերջինս տեղակայված է Լոռու մարզի Ստեփանավան քաղաքում[1]:

Քոլեջը ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց առաջին անգամ անցել է 2021թ՝ ստանալով 2 տարի պայմանական հավատարմագրում:

**ՄՈՒՀ-ի զարգացման ուղղությունները և կրթական ծրագրերը**

Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը Լոռու մարզում գյուղատնտեսական ոլորտը սպասարկող միակ մասնագիտացված ուսումնական հաստատությունն է: 2023-2024 ուսումնական տարում ՄՈՒՀ-ում կրթություն է ստացել շուրջ 388 ուսանող:

Համաձայն «ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության»՝ գյուղատնտեսության ոլորտում որպես մարզի զարգացման հիմնական գերակայություն է սահմանվել ինտենսիվ գյուղատնտեսության զարգացումը: 2022-2025 թվականների համար ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսության զարգացման տեսլականն է՝ ապահովել բարձրարժեք և մրցակցային գյուղատնտեսության ոլորտի կայուն և դիվերսիֆիկացված զարգացումը՝ ժամանակակից և նորարարական գործելակերպերի և տեխնոլոգիաների կիրառմամբ: Գյուղատնտեսության ոլորտում սահմանվել են հետևյալ գերակա ենթաոլորտները. Կարտոֆիլի մշակություն, Հացահատիկի մշակություն, Բանջարանոցային մշակաբույսերի մշակություն, Մեղվաբուծություն, Անասնաբուծություն, Տավարաբուծություն, Հատապտուղների արտադրություն[2]: Իսկ ինչ վերաբերում է քոլեջի իրականացրած կրթական ծրագրերի և մարզի առաջնահերթությունների համապատասխանեցմանը, ապա անհրաժեշտ է նշել, ՄՈՒՀ-ում

[1] Տվյալները վերցված են քոլեջի պաշտոնական կայքէջից՝ Քոլեջի պատմություն — Ստեփանավանի պետական գյուղատնտեսական բոլեջ (stepcollege.am)

[2] Լոռու մարզի գյուղատնտեսության զարգացման ռազմավարության գործունեության ծրագիրը 2022-2025թթ. էջ 5, 64559.pdf (mtad.am)

ներկայումս իրականացվող 8 կրթական ծրագրերից 4-ն ունեն գյուղատնտեսական ուղղվածություն՝ «Անասնաբուժություն», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Գյուղացիական /ֆերմերային/ տնտեսության կազմակերպում», «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգում և շահագործում»: «Անասնաբուժություն» կրթական ծրագրում ներառված է նաև «Մեղվաբուծյան» ոլորտը: 2024-2025 ուստարվանից Կարիտաս ընկերության հետ համագործակցությամբ ՄՈՒՀ-ում կներդրվի նաև միջին մասնագիտական «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությունը:

Մարզի առաջնահերթություններից է նաև զբոսաշրջության ոլորտի զարգացումը: Քոլեջը ուսումնասիրելով և վերլուծելով մարզի ռազմավարական առաջնահերթությունները ներդրել է նաև «Զբոսաշրջություն» Կրթական ծրագիրը:

Մնացյալ երեք մասնագիտությունները՝ «Հաշվապահական հաշվառում», «Մենեջմենթ» և «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» կրթական ծրագրերը մարզի առաջնահերթությունների շարքում ներառված չեն:

Քոլեջում կրթական ծրագրերի իրականացման նպատակով դասավանդում է 47 դասախոս, որից ներկայումս միայն մեկն է գոծատու դասավանդող:

Վերջին 5 տարվա շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 293 շրջանավարտներից 93-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 139-ը աշխատում են, որից միայն 37-ը իրենց մասնագիտությամբ[3]:

Քոլեջին բոլոր մասնագիտությունների ընդունելության համար յուրաքանչյուր տարի հատկացվում են 20 լիցենզիոն տեղեր: Վերջիններս հիմնականում լրացվում են, բացառությամբ «Գյուղացիական ֆերմերային տնտեսության կազմակերպում» (ընդհանուր 8 ուսանող) և «Անասնաբուժություն» (ընդհանուր 21 ուսանող) կրթական ծրագրերի, որտեղ ընդունելության ցուցանիշները համեմատաբար առավել ցածր են:

[3] Տվյալները վերցված են Կարիերայի կենտրոնի կողմից տրամադրված շրջանավարտների բազայից

## ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի (այսուհետ՝ քոլեջ) ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով: Գնահատումն իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ քոլեջը երկրորդ անգամ է անցնում ինստիտուցիոնալ հավատարմագրում:

Առաջին հավատարմագրման գործընթացից հետո Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ընդհանուր զարգացման և կառավարչական որոշումների հիմքում ընկած է եղել 2020-2025 թթ. Ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ ՌԾ), որն իր մեջ որոշակիորեն ներառում է նախորդ հավատարամագրման ընթացքում քոլեջին տրված խորհրդատվությունները: Վերջին տարիներին կառավարչական որոշումները նպաստել են, որպեսզի վերանայվի քոլեջի կառավարման համակարգը, ներդրվի ներքևից վերև հաշվետվողականության կարգ, արտաքին ազդակների շնորհիվ բացվեն նոր մասնագիտություններ, ներդրվի դուալ կրթական համակարգը, բարձրանա որակի ապահովման համակարգի արդյունավետությունը, վերհանվեն ուսանողների և դասավանդողների կարիքները, զարգանան արտաքին կապերը և ձեռքբերվեն միջազգային գործընկերներ:

Կրթական մեկ շրջափուլ անցած աշխատանքի վրա հիմնված (այսուհետ՝ ԱՀՈՒ) երկու փորձարարական կրթական ծրագրերի արդյունավետության վերլուծության և գնահատման արդյունքում ներդրվել է նույն մասնագիտությունների դուալ կրթաձևը, որն առավել գործընկերային և ինստիտուցիոնալ մոտեցում է ենթադրում և որի արդյունքում սովորողները զարգացնելու են իրենց գործնական կարողությունները:

Ընդհանուր առմամբ քոլեջն առաջին հավատարմագրումից հետո կարողացել է գրանցել առաջընթաց, կառավարչական որոշումները ներկայումս կայացվում են առավել վերլուծված տվյալների վրա, և փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը զարգանում է ճիշտ ուղղությամբ: Անհրաժեշտ է նշել, որ վերլուծությունների իրականացման եղած փորձառությունն ապագայում առավել զարգացնելու և բոլոր ստորաբաժանումներում տարածելու պարագայում ՄՈՒՀ-ը կունենա որոշումների կայացման տվյալահենք համակարգ, որը կնպաստի ՄՈՒՀ-ի շարունակական և հիմնավորված զարգացմանը:

Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում իրականացվում են 8 կրթական ծրագրեր, որից երկուսը ԱՀՈՒ ձևաչափով: ԱՀՈՒ կրթական ծրագրերի ուսանողներին տվող հանձնարարականները դասախոսները կապում են գյուղատնտեսության ոլորտի պրակտիկ գործունեության հետ: Մասնագիտական վերլուծությունները և գործնական հմտությունները առավել արտահայտված են այդ ծրագրերում ներդրված դիպլոմային աշխատանքներում, որոնք հիմնված են աշխատաշուկայից եկող իրական դեպքերի ուսումնասիրությունների վրա: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ ԱՀՈՒ

կրթական ծրագրերի վերջնարդյունքներից որոշները ամբողջությամբ չեն ստուգվում՝ կապված համապատասխան ոլորտի գործատուների հնարավորություններով և քոլեջի նյութատեխնիկական բազայի սահմանափակությամբ:

Մնացյալ կրթական ծրագրերի իրականացումն առավել տեսական է՝ պայմանավորված քոլեջի ռեսուրսային բազայի սակավությամբ և գործատուների համեմատաբար քիչ ներգրավվածությամբ: Խնդրի լուծումը ՄՈՒՀ-ը տեսնում է ապագայում բոլոր կրթական ծրագրերը աստիճանաբար ԱՀՈՒ կամ դուալ դարձնելու մեջ: Փորձագիտական խումբը նշում է, որ կարևորում է բոլոր կրթական ծրագրերում գործատուների ներգրավվածության մեծացումը անկախ կրթական ծրագրի կազմակերպման ձևից (ԱՀՈՒ կամ ոչ ԱՀՈՒ), վերջինս կմեղմի այս պահին եղած նյութատեխնիկական բազայի սակավությունը և որոշակիորեն կնպաստի բոլոր կրթական ծրագրերի համաչափ զարգացմանը:

Իսկ ինչ վերաբերում է դասախոսական անձնակազմին, ապա անհրաժեշտ է նշել, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո նկատելի է դասախոսական կազմի երիտասարդացման միտում: Վերջին տարիներին մեծ քանակով երիտասարդ դասախոսական կազմով քոլեջը համալրելը հանգեցրել է մենթորության քաղաքականության մշակման և համակարգային իրականացման, դասախոսական կազմի կարողությունների զարգացման անհրաժեշտությանը: ՄՈՒՀ-ը գիտակցում է վերջինիս կարևորությունը և դասախոսներին մենթորական աջակցություն տրամադրելու ուղղությամբ իրականացնում է որոշակի քայլեր: Իսկ ինչ վերաբերում է պրակտիկ մասնագիտական ոլորտից դասախոսական կազմի ներգրավվածությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ ներկայումս այդ ցուցանիշները ցածր են՝ դասապրոցեսում ներգրավված է ընդամենը 1 դասախոս: ԱՀՈՒ-ի շրջանակներում գործատուի մոտ գործնական պարապմունքներ իրականացնող մենթորները որոշակիորեն մեղմացնում են պրակտիկ մասնագետների սակավությունը, սակայն այդ լավ փորձը նկատելի է դեռևս միայն երկու ծրագրերում:

Ամփոփելով կարող ենք նշել, որ գործող կրթական ծրագրերը, ուսանողներին տրվող առաջադրանքները, համագործակցության շրջանակում գործատուների ռեսուրսային բազայի համատեղ օգտագործումը հիմնականում ապահովում են ուսանողներին տրվող որակավորումների արժանահավատությունը:

Նախորդ հավատարմագրման գործընթացից հետո դեռևս արդիական է մնում քոլեջում դասավանդող անձնակազմի հետազոտական կարողությունների զարգացումը և վերջիններիս մոտ միջազգային փորձն ուսումնասիրելու մոտիվացիայի բարձրացումը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ինսիտուցիոնալ հավատարմագրման հաջորդ շրջափուլում ուսումնական հաստատությունը այս փաստին պետք է մեծ ուշադրություն դարձնի՝ ներդնելով նաև հստակ քաղաքականություններ և ձևավորելով դասախոսական կազմի մոտ նորարարությունը մշատպես ուսումնասիրելու և տեսադաշտում պահելու մակույթ: Վերջինս կնպաստի ինչպես մրցունակ շրջանավարտի պատրաստմանը, այլև մարզի զարգացման տեսլականի (մրցակցային գյուղատնտեսություն ունենալուն՝ ժամանակակից և նորարարական գործելակերպերի և տեխնոլոգիաների կիրառմամբ) իրականացմանը:

Գյուղատնտեսության ոլորտում դուալ մասնագիտությունների ներդրման և միջազգային գործընկերային հարաբերությունների հաստատման արդյունքում ծրագրային փաթեթը մշակող

դասախոսները որոշակիորեն ուսումնասիրել են միջազգային նմանատիպ փորձը: Փորձագիտական խումբը լիահույս է, որ նմանօրինակ դրական փորձառությունը քոլեջի տնօրենությունը կտարածի նաև այլ մասնագիտություններում դասավանդող մասնագետների շրջանում:

Ուսանողները քոլեջի ամենակարևոր շահակիցներն են: Մշակվել են ուսանողների կարիքների բացահայտման մի շարք մեխանիզմներ, որոնց շնորհիվ քոլեջում տիրում է ուսանողակենտրոն միջավայր: Ինչ վերաբերում է շրջանավարտների կարիերայի հետագծին, ապա փորձագիտական խումբը նշում է, որ այս համատեքստում քոլեջի ձեռքբերումները այդքան էլ գոհացուցիչ չեն: Այս ուղղությամբ խորքային վերլուծություններ իրականացնելու անհրաժեշտություն կա՝ պարզելու աշխատանք չգտնելու հիմական պատճառները, ըստ որի էլ հնարավոր կլինի խնդրի լուծման ուղղությամբ քայլեր ձեռնարկել:

Փորձագիտական խումբը կարևորում է, որ քոլեջում հաշվետվողականության համակարգի ներդրումը հանդիսացել է որպես ռազմավարական նպատակ, գնահատելի են այս ուղղությամբ իրականացրած աշխատանքները, սակայն խումբը գտնում է, որ հասարակությանը քոլեջի մասին տեղեկատվության տրամադրման գործընթացների թափանցիկությունը լավարկման կարիք ունի: Քոլեջը մտել է զարգացման նոր շրջափուլ և դրա մասին հասարակության լայն շերտերին իրազեկելը կնպաստի քոլեջի գրավչության բարձրացմանը:

Փորձագիտական խմբի ուշադրությանն է արժանացել այն հանգամանքը, որ քոլեջն արդյունավետորեն համագործակցում է տեղական և մի շարք միջազգային գործընկերների հետ, նրանց թիվը վերջին տարիներին ավելացել է: Միջազգային գործընկերների շնորհիվ ձեռք են բերում ռեսուրսներ, ուսումնասիրում է լավագույն փորձը, ինչը կնպաստի նաև պրակտիկ կարողություններով օժտված շրջանավարտների պատրաստմանը:

**Հաստատության ուժեղ կողմերն են.**

1. Վերջին տարիներին քոլեջի բյուջեի ավելացումը:
2. Կառավարման հիերարխիկ կապերի հստակ տարանջատումը, աշխատակիցների գործառույթների հստակ սահմանումը:
3. Դասախոսական կազմի աշխատավարձերի բարձրացումը:
4. Որոշ ստորաբաժանումների հաշվետվություններում վերլուծական բաղադրիչի ներդրումը:
5. Արտաքին և ներքին շահակիցների ներառականությունը կառավարման գործընթացներում:
6. ԱՀՈՒ կրթական ծրագրերի իրականացման փորձառությունը և իրականացված կրթական ծրագրերի հիման վրա առաջ եկած խնդիրների վերհանումը և վերլուծումը:
7. Դուալ կրթական ծրագրերի շրջանակներում միջազգային փորձի ուսումնասիրման փորձառությունը:
8. Գյուղատնտեսական ոլորտում միջազգային ծրագրերի շրջանակում մասնագիտական վերապատրաստումների առկայությունը գյուղատնտեսական երկու մասնագիտությունների շրջանակներում:
9. Երկու գյուղատնտեսական մասնագիտությունների գծով վերլուծական տարր պարունակող, ուսանողի գործնական փորձառության վրա հիմված դիպլոմային աշխատանքների ներդրումը:

10. Տեղական և միջազգային գործընկերների ներգրավումը և միասնական ծրագրերի իրականացումը։

**Հաստատության թույլ կողմերն են.**

1. Ռազմավարական պլանավորման մեջ արդյունավետության գնահատման ցուցիչների բացակայությունը։
2. Որոշ մասնագիտական կրթական ծրագրերի (այսուհետ՝ ՄԿԾ) ոչ արդյունավետ կառավարումը։
3. Կադրերի զարգացման, մասնագիտական որակների բարձրացման մեխանիզմների անկատարությունը։
4. Ռեսուրսային բազայի սակավությունը ուսանողի գործնական կարողությունները ուսումնական հաստատությունում ձեռք բերելու և գնահատելու համար։
5. Որոշ մասնագիտություններում տեսական դասավանդումը և գնահատումը՝ առանց ընթացիկ և վերջնական գործնական կարողության գնահատման։
6. Որոշ մասնագիտությունների գծով արտադրական պրակտիկաների բացակայությունը։
7. Բացի գյուղատնտեսական մասնագիտություններից մյուս ՄԿԾ-ներում մասնագիտական վերապատրաստումների սակավությունը։
8. Հետազոտական աշխատանքներում ուսանողների և դասախոսների սահմանափակ ներգրավվածությունը։
9. Շրջանավարտների զբաղվածության ցածր մակարդակը։

**Խորհրդատվություններ.**

**Տվյալահենք կառավարում**

1. Մշակել և ներդնել ՌԾ նպատակների իրականացման արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշներ և իրականացնել նախնական ֆինանսական պլանավորում։
2. Ակտիվացնել ներքին և արտաքին շահակիցներին ներգրավվածությունը ՌԾ պլանավորման բոլոր գործընթացներում։
3. Ստորաբաժանումների տարեկան պլանավորումները բխեցնել ՌԾ նպատակներից, որի արդյունքում հնարավոր կլինի սահմանել հստակ, չափելի ցուցիչներ ՌԾ կատարողականը գնահատելու համար։
4. Շարունակել ընդլայնել լրացուցիչ ֆինանսական ռեսուրսներների ներգրավման ՄՈՒՀ-ի քաղաքականությունը՝ արդեն իսկ ունեցած փորձառության հիման վրա։
5. Ապահովել բոլոր ամբիոնների համաչափ զարգացումը՝ հիմքում ունենալով գործնական հմտություններ ձևավորող, աշխատանքի վրա հիմված կրթություն տրամադրելու մոտեցումը (ԱՀՈՒ, դուալ)։
6. Վերանայել Որակի ապահովման (այսուհետ՝ ՈԱ) ձեռնարկը՝ համապատասխանեցնելով քոլեջի առանձնահատկություններին։
7. Վերանայել ֆոկուս-խմբային հանդիպումների, հարցումների անցկացման թեմատիկան՝ կենտրոնանալով նամանավանդ դասավանդման արդյունավետություն, ՄԿԾ-ների

գնահատման և քոլեջի համար առաջնահերթություններ համարվող խնդիրների վրա՝ ուսումնասիրելով վերջիններս բազմակողմանիորեն և տարբեր տեսանկյուններից (ուսանող, դասախոս, գործատու, շրջանավարտ և այլն):

8. Շարունակել տարեկան SWOT վերլուծությունների իրականացումը՝ ներառելով նաև ստորաբաժանումների կողմից թույլ կողմերի և վտանգների հաղթահարման առաջարկները:

**Որակավորումների արժանահավատ շնորհում**

9. Ոչ գյուղատնտեսական մասնագիտությունները գյուղատնտեսական տարածաշրջանում իրացնելու համար վերանայել ծրագրերը՝ ներառելով ոլորտային բաղադրիչ (ընտրովի, պահուստային ժամերի հաշվին) ։
10. Դուալ ՄԿԾ-ների արդյունավետության, հնարավոր բոլոր վերջնարդյունքների ապահովման նպատակով գործընկեր կազմակերպությունների հետ մշակել և ներդնել մոդուլների արտաքին և ներքին փոխատեղման ճկուն գրաֆիկ:
11. Մշակել և ներդնել ուսանողների գնահատման միասնական մոտեցում՝ ապահովելով գնահատման թափանցիկությունը, և սահմանելով գրագողության դեմ պայքարի հատուկ մեխանիզմեր:
12. Բոլոր կրթական ծրագրերում (թե՛ ընթացիկ, թե՛ ավարտական ամփոփման ժամանակ) կիրառել գործնական կարողությունները ստուգող առաջադրանքներ կամ մոտեցումներ:
13. Ներդնել ՄԿԾ-ների բենչմարքինգի իրականացման հստակ մեխանիզմեր՝ ապահովելով ծրագրերի շարունակական բարելավումը տեղական և արտասահմանյան ուսումնական հաստատությունների լավ փորձի վրա:
14. Ներդնել կրթական ծրագրերի մշտադիտարկման հստակ մեխանիզմեր՝ ապահովելով բոլոր ՄԿԾ-ների շարունակական բարելավումը:
15. Իրականացնել դասախոսների կարիքների պարբերական վերհանում՝ ներդնելով կարիքների հիման վրա ձևավորված մեթոդական և մասնագիտական կատարելագործմանն ուղղված հստակ մեխանիզմեր:
16. Ներդնել սկսնակ դասավանդողների մենթորության կարգ՝ նպաստելով վերջիններիս արագ և դյուրին ինտեգրմանը կրթական գործընթացներում:
17. Դիտարկել պրակտիկ դասավանդողների ներգրավման հնարավորությունը (նամանավանդ ոչ ԱՀՈՒ և ոչ դուալ ՄԿԾ-ներում)՝ աշխատաշուկայի պահանջներին համահունչ կրթություն իրականացնելու նպատակով:
18. Բարելավել քոլեջի առաջին անհրաժեշտության ենթակառուցվածքները (նամանավանդ լաբորատորիաները)՝ միջոցներ տրամադրելով վերանորոգման, բարեկարգման աշխատանքներին, ռեսուրսային հագեցվածությանը, որը կնպաստի ուսուցման գործընթացի անխափան իրականացմանը:
19. Ընդլայնել գործընկերների շրջանակը՝ բոլոր մասնագիտությունների կրթական ծրագրերն իրականացնելու նպատակով վերջիններիս ռեսուրսային բազայից օգտվելու հնարավորությամբ:

20. Իրականացնել ֆինանսական միջոցների բաշխում ըստ ռազմավարական նպատակների՝ համաձայն ֆինանսական միջոցների գոյացման և բաշխման քաղաքականության և ընթացակարգի:
21. Գտնել այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների ներգրավման մեխանիզմներ՝ հաշվի առնելով միջազգային նոր գործընկերներ ձեռք բերելու հնարավորությունը:
22. Քայլեր ձեռնարկել ձեռնարկատիրական աշխատանքը ՄՈՒՀ-ում զարգացնելու ուղղությամբ՝ ներգրավելով նաև ֆինանսական միջոցներ:

**Երկարաժամկետ զարգացում**

23. Մշակել և ներդնել դասախոսական կազմի հետազոտական գործունեության խրախուսման քաղաքականություն՝ դասախոսների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում մեծացնելու, միջազգային փորձի ուսումնասիրությունը և նորարար մեթոդների ներմուծումը ապահովելու նպատակով:
24. Բոլոր կրթական ծրագրերում մեծացնել ուսանողներին տրամադրվող հետազոտական, վերլուծական աշխատանքների բաղադրիչը ինքնուրույն աշխատանքների տեսքով՝ միևնույն ժամանակ զարգացնելով ուսանողների մոտ հետազոտական աշխատանք իրականացնելու կարողությունները:
25. Դիտարկել դիպլոմային աշխատանքների ունեցած լավ փորձի տարածումը նաև մյուս կրթական ծրագրերում՝ նախապատրաստելով նաև դասախոսական կազմին այս փոփոխություններին:
26. Հետազոտական միջավայրի /նյութատեխնիկական բազա, պոտենցիալ/ ընդլայնման նպատակով դիտարկել քոլեջի դասախոսական կազմի համագործակցությունը գործատուների, գյուղատնտեսական ուղղվածություն ունեցող այլ ուսումնական հաստատությունների դասախոսական կազմի հետ՝ համատեղ հետազոտական աշխատանքներ իրականացնելու ուղղությամբ:
27. Մշակել և ներդնել տնօրենի հաշվետվության ձևաչափ, որը կամփոփի ռազմավարական առաջնահերթությունների իրականացման կատարողականը:
28. Մեծացնել հասարակությանը գիտելիքի փոխանցման հնարավորությունները՝ դիտարկելով նաև գյուղատնտեսական ոլորտում մարզին խորհրդատվություն, աջակցություն տրամադրելու հնարավորությունը:
29. ՄՈՒՀ-ի տեսանելիությունը մեծացնելու նպատակով դիտարկել նաև օտարալեզու կայքէջ ունենալու հնարավորությունը:
30. Աշխատանքներ տանել միջազգային գործընկերների շրջանակի ընդլայնման ուղղությամբ՝ հնարավորինս ներգրավելով միջազգայնացման գործընթացում նաև մյուս մասնագիտությունները:
31. Շարունակել բարելավել դասավանդողների և ուսանողների օտար լեզվի իմացությունը՝ նպաստելով ուսանողների և դասախոսների շարժունությանը, մասնագիտական ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրությանը:

32. Համապարփակորեն ուսումնասիրել ուսանողների զբաղվածության ցուցանիշները (ներառելով նաև ինքնազբաղվածներին) և խորքային վերլուծել շրջանավարտների մասնագիտական զբաղվածության ցածր մակարդակի հիմնական պատճառները։

_____

Քրիստինե Հակոբյան

**Փորձագիտական խմբի ղեկավար**

**9-ը սեպտեմբերի, 2024թ.**

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի[4] կողմից.

1. **Քրիստինե Հակոբյան՝** Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջի Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, դասախոս, փորձագիտական խմբի ղեկավար,
2. **Միդա Դաբաղյան՝** Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն, Կրթության որակի ապահովման պատասխանատու, կադրային հարցերով տնօրենի տեղակալ, փորձագիտական խմբի անդամ,
3. **Ալիսա Գրիգորյան՝** Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի դասախոս, փորձագիտական խմբի անդամ,
4. **Արամ Հակոբյան՝** Երևանի հենակետային բժշկական քոլեջի «Քույրական գործ» մասնագիտության ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ, ինսիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ **Անահիտ Տերտերյանը**:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում՝ համակարգողը, ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

**Դիմում պետական հավատարմագրման համար**

Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 01.02.2024թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով: ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (29.02.2024թ.) քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

**Ինքնավերլուծություն**

Հաշվի առնելով ուսումնական հաստատությունների՝ ինքնավերլուծություն իրականացնելու կարողությունների պակասը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման կարևորությունը՝ ՈԱԱԿ–ը փետրվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

իրականացրել: Աշխատաժողովների ընթացքում հավատարմագրվող ուսումնական հաստատություններին ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն:
Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել են նաև միջանկյալ հանդիպումներ:
Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացրել է 02.05.2024թ.: Ինքնավերլուծության գործընթացքում ներգրավված են եղել ղեկավար, վարչական, դասախոսական կազմերի ներկայացուցիչներ, ինչպես նաև գործատու, ուսանող և շրջանավարտ:

**Նախապատրաստական փուլ**

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

**Նախնական այց**

11.06.2024թ. առցանց հանդիպում է տեղի ունեցել քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպմանը ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակացույցը[5], ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

**Փորձագիտական այց**

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 18.06.2024թ.-20.06.2024թ. ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև ավարտական աշխատանքի պաշտպանության («Մենեջմենթ» ՄԿԾ), փաստաթղթերի

[5] ԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ուսումնասիրություն[6], ռեսուրսների դիտարկում[7] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրերի պատասխանատուների, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

**Փորձագիտական զեկույց**

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 05-ը օգոստոսի, 2024թ.: Զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջն իր արձագանքը ներկայացրել է ՈԱԱԿ 21.08.2024թ.: Փորձագիտական խումբը կազմել է փորձագիտական զեկույցի վերջնական տարբերակը և ներկայացրել ՄՈՒՀ-ին 09.09.2024թ.:

_____

**Անահիտ Տերտերյան**
Փորձագիտական խմբի համակարգող

**09-ը սեպտեմբերի, 2024թ.**

[6] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ
[7] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

## ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
## I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:**

**Փաստեր**: «Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությունը ձևակերպված է 2020-2025 թթ. Ռազմավարական ծրագրում (այսուհետ՝ ՌԾ): Քոլեջի առաքելությունն է՝ «Կենտրոնացնել կրթական, կադրային և նյութական ներուժը, ապահովել որակյալ կրթություն և պատրաստել գյուղատնտեսության ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող ու դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող միջին մասնագետներ»: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 4-րդ և 5-րդ մակարդակին համապատասխան՝ համաձայն իր առաքելության: Ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի հիմնարար սկզբունքները և արժեքները, այն է՝ որակը, էթիկան և մասնագիտական մոտեցումները, արժեհամակարգի տարրերն են՝ տարածաշրջանում գյուղատնտեսական ոլորտի որակյալ մասնագետներ պատրաստող առաջատար ուսումնական կենտրոն դառնալը, ակտիվ ուսումնառողները, ռազմավարական գործընկերների հետ ակտիվ փոխգործունեության ապահովումը՝ պահպանելով սեփական ինքնությունը:

Ռազմավարական ծրագրով քոլեջն իր համար սահմանել է թվով 9 հիմնախնդիր, որոնք ուղղված են՝

1. կառավարման համակարգի արդյունավետության բարձրացմանը,
2. պահանջարկ ունեցող նոր ՄԿԾ-երի մշակմանն ու ներդրմանը,
3. ուսանողների կրթական կարիքների վերհանմանը,
4. ՄԿԾ-երի իրականացման համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով ապահովմանը,
5. հետազոտական գործունեության և ուսումնառության հետ կապի ապահովմանը,
6. ուսումնական միջավայրի, հաշվետվողականության մեխանիզմների բարելավմանը,
7. արտաքին կապերի ամրապնդմանը, զարգացմանը
8. միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծմանը
9. որակի ապահովման ներքին համակարգի արդյունավետության բարձրացմանը:

ՌԾ-ի իրականացման համար ֆինանսական համապատասխան պլանավորում չի իրականացվել:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ՄՈՒՀ-ը մշակել է ՌԾ նպատակների իրականացման պլան-ժամանակացույց, որտեղ առանձնացված են նպատակներին հասնելու նախատեսվող միջոցառումները, պատասխանատուները, սահմանված են ժամկետներ՝ հիմնականում յուրաքանչյուր տարվա կտրվածքով: ՌԾ-ում և պլան-

ժամանակացույցում առկա չեն ակնկալվող արդյունքի գնահատման ցուցանիշները, ռազմավարական ծրագրի իրականացման ֆինանսավորման աղբյուրները, նախանշված նպատակների իրականացման ընթացքում հնարավոր առաջ եկող ռիսկերը և այդ ռիսկերի բացասական ազդեցությունը մեղմացնող գործողություններն ու իրականացված աշխատանքների մշտադիտարկման մեխանիզմները:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՌԾ-ն մշակելիս ՄՈՒՀ-ի տնօրենությունը հաշվի է առել առաջին ինստիտուցիոնալ հավատարմագրման ընթացքում վերհանված խնդիրները, ընդհանուր առմամբ քոլեջի առաջին հավատարմագրման արդյունքների բարելավման պլանը մեծ մասամբ տեղ է գտել 2020-2025 ռազմավարական ծրագրում:

Քոլեջը հստակ սահմանել է իր ներքին և արտաքին շահակիցների շրջանակը, այն է՝ ուսանողները, ծնողները, աշխատակիցները, գործատուները, ՀԿ-ները, միջազգային և տեղական այլ կազմակերպություններ, լիազոր մարմինը և հիմնադիրը: ՌԾ-ն մշակելիս արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանում չի իրականացվել: Սակայն հարկ է նշել, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը և սահմանված նպատակները:

Քոլեջն ունի ՌԾ իրականացման, գնահատման, վերանայման քաղաքականություն, սակայն փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որպես այդպիսին փաստաթուղթը դեռևս չի գործարկվել, ՌԾ իրականացման արդյունավետության գնահատում տեղի չի ունեցել:

Քոլեջի հաշվետվությունների դիտարկումը ցույց տվեց, որ դրանք հիմնականում տարեկան աշխատանքային պլանավորումներն ու դրանց արդյունքներն են: Վերջին տարիների որոշ ստորաբաժանումների հաշվետվություններ ներառում են իրականացված աշխատանքների SWOT վերլուծություններ, առկա են քանակական, որակական ցուցանիշների վերլուծություններ, բացահայտված թերություններ, առաջարկներ (դուալ կրթական ծրագրի ղեկավարի հաշվետվություններում, հանրակրթական բաժնի վարիչի հաշվետվություններում և այլն): Հարկ է նշել, որ հաշվետվությունները ամբողջովին փոխկապակցված չեն ՌԾ նպատակների հետ: Այդուհանդերձ՝ փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի գործունեությունը հիմնականում համապատասխանում է ՌԾ նպատակներին և խնդիրներին:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը գիտակցում է իր դերակատարությունը տարածաշրջանում, վերջինիս համար որակյալ գյուղատնտեսական ոլորտի մասնագետներ պատրաստելու գործում: Գնահատելի է, որ առաջին ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո ջանք է գործադրվել ակտիվացնել, զարգացնել և ամրացնել այն ոլորտները, որոնց գործունեությունը ռիսկային է դիտարկվել նախորդ փորձագիտական խմբի կողմից:

Փորձագիտական խումբը դրականորեն գնահատում է ՄՈՒՀ-ի ջանքերը ռազմավարական պլանավորման գործընթացները բարելավելու ուղղությամբ, սակայն առավել կուռ ռազմավարական կառավարման համակարգ ունենալու համար ՄՈՒՀ-ը կարիք կունենա իրականացնելու ՌԾ նպատակներին համապատասխան ֆինանսական պլանավորում, մշակելու

ՌԾ նպատակների ձեռքբերման կատարողականի ցուցանիշներ, ներդնելու ռազմավարական ծրագրի իրականացման և գնահատման գործող մեխանիզմներ՝ գործընթացների տարբեր փուլերում և բաղադրիչներում ներգրավելով ներքին և արտաքին շահակիցներ:

Չնայած նրան, որ քոլեջում ներդրվել է հաշվետվողականության համակարգ, որոշ ստորաբաժանումների հաշվետվություններ դարձել են առավել վերլուծական, որը որոշակիորեն հնարավորություն է ընձեռել գնահատելու ՌԾ-ի իրականացումը, այնուամենայնիվ առավել թիրախային գնահատում իրականացնելու համար ՄՈՒՀ-ը կարիք կունենա հաշվետվությունների ներկայացման ձևաչափերը ուղղակիորեն համապատասխանեցնել ՌԾ նպատակներին, որը կնպաստի ՌԾ-ի առավել արդյունավետ գնահատմանը:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը ունի հստակ ձևակերպված առաքելություն, հնգամյա ռազմավարական ծրագիր՝ սահմանված հիմնախնդիրներով, ՌԾ իրականացման պլան-ժամանակացույց, ակնառու են առաջընթացի ձգտող գործընթացներ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:**

**Փաստեր**: Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ընթացիկ կառավարումն իրականացվում է տնօրենի, Կառավարման, Մանկավարժական, Տնօրենական և ՈՒսումնամեթոդական խորհուրդների կողմից:

Առաջին հավատարմագրման գործընթացից հետո ՄՈՒՀ-ը, ըստ ՌԾ պլանավորման, ձեռնամուխ է եղել բարելավել կառավարման համակարգը, մասնավորապես՝ մշակվել է նոր կազմակերպական կառուցվածք, որտեղ հստակ արտահայտված են ստորաբաժանումների միջև առկա (հորիզոնական և ուղղահայաց) կապերը:

Ըստ հաստիքացուցակի բոլոր վարչական և ուսումնաօժանդակ աշխատակիցներն ունեն պաշտոնի նկարագրեր: 2023-2024 ուստարվա սկզբից թափուր է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի պաշտոնը, վերջինիս գործառույթների մեծ մասն իրականացվում է տնօրենի, որոշներն էլ ամբիոնի վարիչների և ուսումնական մասի վարիչի կողմից: Այցի ընթացքում թափուր էր նաև բուժքրոջ հաստիքը:

Կրթական ծրագրերը կառավարվում են 3՝ Զոոանասնաբուժական, Տնտեսագիտության և զբոսաշրջության, Տեխնիկական ամբիոնների, ինչպես նաև Հանրակրթական ծրագրերով բաժնի և Ուսումնական մասի վարիչների կողմից: ԱՀՈՒ և դուալ կրթական ծրագրերի կազմակերպումն ու իրականացումը տեղի է ունենում դուալ կրթական ծրագրի պատասխանատուի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջամբիոնային կապերը թույլ են զարգացած, համատեղ իրականացվող ծրագրերի, գործընթացների վերաբերյալ տեղեկատվություն չտրամադրվեց:

Քոլեջի հիմնական ֆինանսական մուտքերը պետական բյուջեից են՝ 96-98%, որը, պայմանավորված ուսանողների թվի ավելացմամբ, վերջին տարիներին աճել է: Ֆինանսների բաշխումը քոլեջն իրականացնում է տարեկան պլանավորմամբ՝ ֆինանսատնտեսական նախահաշվի նախագծի հիման վրա: Ծախսերի հիմնական ուղղություններն են՝ աշխատակիցների աշխատավարձերը (83,9 %), ընթացիկ ծախսերը (6,07%), սոցիալական նպաստները (10 %) : Անհրաժեշտ է նշել, որ վերջին տարիներին քոլեջը ակտիվություն է դրսևորել նաև միջազգային ծրագրերում ներառվելու (ՄԱՎԵՏԱ, Էրասմուս +, «Բիզնես և կրթություն» հիմնադրամ) և այդ ձևով նյութական ռեսուրսներ ներգրավելու գործում: Մասնավորապես վերջին տարիներին ձեռք է բերվել 10 մեղվաընտանիք, ուսանողների տեղափոխման համար նախատեսված մեքենա, համակարգիչներ և այլն:

Ինչ վերաբերում է դասախոսական, ուսանողական համակազմերի ընդգրկվածությանը կառավարման գործընթացներում, ապա անհրաժեշտ է նշել, որ վերջիններս ընդգրկված են կառավարման, մանկավարժական խորհուրդներում, բացի այդ ունեն փորձառություն՝ ուսանողները մասնակցում են ամբիոնների, մանկավարժական խորհրդի նիստերին և հանդես գալիս առաջարկություններով, օրինակ՝ միջկուրսային ինտելեկտուալ խաղերի կազմակերպման և իրականացման, դասամիջոցի տևողության ավելացման, սնման կետի հետ կապված հարցերի և այլն: Խորհուրդներում ընդունված որոշումները հայտարարությունների տեսքով հրապարակվում են շահակիցներին տեսանելի վայրերում (հայտարարությունների անկյունում):

Քոլեջի գործունեությունն իրականացվում է ռազմավարական՝ երկարաժամկետ և ընթացիկ տարեկան՝ կարճաժամկետ պլանավորումներով: Ստորաբաժանումների աշխատանքային պլանները կազմվում են տարեկան՝ կարճաժամկետ պլանավորմամբ: Պլանավորման փաստաթղթերի դիտարկումը ցույց տվեց, որ վերջիններս հիմնականում կրկնվում են նախորդ տարիների պլանները: Պլանավորման մեջ չի ընդգծվում ՌԾ հիմնախնդիրները: Տարեկան պլանավորումները կապված են ամենամյա ուսումնական գործընթացի կազմակերպման հետ:

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում կառավարումն իրականացվում է վերևից ներքև ուղղահայաց կառավարմամբ, իսկ հաշվետվողականությունը՝ ներքևից վերև: Ստորաբաժանումների միջև գործառնական կապերը զարգացած են այնքանով, որքանով կառավարման առավել բարձր մակարդակում գտնվող ստորաբաժանման տարեկան պլանավորման մեջ ներառվում է ցածր օղակների պլանավորումները: Օրինակ՝ ուսումնական մասի վարիչի պլանավորման մեջ ներառվում է դուալ կրթական ծրագրի պատասխանատուի, ամբիոնի վարիչների տարեկան պլանավորումները, ամբիոնի վարիչների տարեկան պլանավորման մեջ արտահայտված է դասախոսների պլանավորումները և այլն:

ՄՈՒՀ-ը ստորաբաժանումների աշխատանքների վերահսկողության և մշտադիտարկման մեխանիզմ դիտարկում է հաշվետվությունները: Ստորաբաժանումները հաշվետվություն են

ներկայացնում կիսամյակային կտրվածքով, որոնք կիսամյակի ընթացքում իրականացված աշխատանքների պարզ նկարագրությունն են: Դուալ կրթական ծրագրի պատասխանատուն յուրաքանչյուր տարի գնահատում և վերլուծում է նաև ԱՀՈՒ ծրագրերի արդյունավետությունը և վերջինիս կազմակերպման ընթացքում առաջ եկած խնդիրները: ԱՀՈՒ ծրագրերի փորձի հիման վրա 2024-2025 ուստարում կներդրվեն նաև դուալ կրթական ծրագրերը: Վերլուծությունների իրականացման լավ փորձը չի տարածվել մյուս ամբիոններում: Լավ փորձի մեխանիզմների ստեղծման և տարածման անհրաժեշտությունը շեշտադրվել է նաև նախորդ հավատարմագրման գործընթացում:

Քոլեջի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն իրականացվում է քննարկումների, ֆոկուս խմբերի և հարցումների միջոցով: Անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ը հավաքագրում է որոշ տվյալներ, ուսումնասիրում է տարբեր գործոններ, սակայն երբեմն որոշումներ չեն կայացվում ըստ հավաքագրված տվյալների: Օրինակ՝ շրջանավարտների զբաղվածության ցուցանիշները ցույց են տալիս, որ ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտություններ, որտեղ շրջանավարտների զբաղվածությունը չափազանց ցածր է («Փոխադրումների կազմակերպում և կառավորում տրանսպորտում»- 1%, «Մենեջմենթ»- 0,7%), վերջինս պայմանավորված է այս մասնագիտությունների ուղղությամբ գործատուների պահանջարկի գրեթե բացակայությամբ: Միևնույն ժամանակ այս կրթական ծրագրերը պահանջարկված են ընդունելության տեսանկյունից, և քոլեջի համար ապահովում են ֆինանսական մուտքեր:

Միևնույն ժամանակ նկատելի են դեպքեր, երբ հավաքագրված տվյալները և վերլուծությունները նպաստում են որոշ գործընթացների կանոնակարգմանը, օրինակ՝ վերջին տարիներին մեծ թվով նոր դասախոսական կազմի ներգրավումը, անձնակազմի երիտասարդացումը, ինչպես նաև դասալսումների արդյունքները հանգեցրել են մենթորության համակարգի ուղղությամբ կարգի մշակմանը (այն դեռևս մշակման փուլում է) և մարդկային ռեսուրսների կարողությունների զարգացման անհրաժեշտությանը:

ՄՈՒՀ-ը փորձել է բոլոր գործընթացներում ներդնել ՊԻԳԲ շրջափուլը, օրինակ՝ շրջափուլով անցել են քոլեջի գործընթացները կանոնակարգող փաստաթղթերը, հաշվետվողականության համակարգը, կարիքների վերհանման գործընթացները և այլն: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջում առկա հիմնական գործընթացների մեծ մասը գտնվում է իրականացման փուլում:

ՄՈՒՀ-ում մասնագիտական կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատվում է շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալների, գործատուների, պրակտիկ ոլորտի դասախոսների հետ քննարկումների, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունների, ինչպես նաև ուսանողների շրջանում իրականացվող հարցումների արդյունքների հիման վրա: Փորձագիտական այցից պարզվեց, որ գործատուները հիմնականում գոհ են քոլեջի ուսանողներից, նշելով, որ վերջիններս ունեն բավարար տեսական գիտելիքներ, որոնք պրակտիկայի ընթացքում օգնում են գործնական կարողությունների ձևավորմանը:

Քոլեջն ունի ֆեյսբուքյան էջ, կայքէջ, որտեղ լուսաբանվում են քոլեջի առօրյա գործընթացները, ՄԿԾ-ների վերաբերյալ տեղեկատվության հրապարակումը սահմանափակվում է ըստ մասնագիտությունների մասնագիտական զբաղմունքի նկարագրով, շրջավանավարտների

զբաղվածության վերաբերյալ տվյալները և հաջողություն ունեցած շրջանավարտների վերաբերյալ տվյալներ ՄՈՒՀ-ը չի հրապարակում:

**Դատողություններ:** Դրական է, որ քոլեջում կառավարումն իրականացվում է միանձնյա և կոլեգիալության համադրությամբ: Գովելի է, որ նախորդ հավատարմագրումից հետո Քոլեջը քայլեր է ձեռնարկել կառավարման կառուցվածքը բարելավելու, ստորաբաժանումների աշխատանքը կանոնակարգելու ուղղությամբ:

Նկատելի է նաև, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո Քոլեջը ակտիվություն է դրսևորել ընդգրկվելու միջազգային ծրագրերում՝ նյութական ռեսուրսները, կրթական ծրագրերը բարելավելու նպատակով: Փորձագիտական խումբը խրախուսում է, որ քոլեջի ղեկավար կազմը շարունակի և առավել շատ ջանքեր գործադրի ֆինանսական լրացուցիչ միջոցների ներգրավման ուղղությամբ, ինչը հնարավորություն կընձեռի ռազմավարական առաջնահերթությունների իրականացման համար: Այս ուղղությամբ ՄՈՒՀ-ը կարիք կունենա զարգացնել նաև իր մարդկային ռեսուրսները՝ գործընթացներում ներգրավելով այնպիսի աշխատակիցների, ովքեր կկարողանան գտնել գործընկերներ, դրամաշնորհային ծրագրեր, մասնակցել դրանց: Մարդկային ռեսուրսների զարգացումը կնպաստի նաև ամբիոնների համաչափ զարգացմանը, ինչպես նաև ԱՀՈՒ, դուալ կրթական ծրագրերի քանակի մեծացմանը և լիարժեք իրականացմանը:

Փորձագիտական խումբը ռիսկային է համարում տնօրենի՝ ուսումնական աշխատանքների գծով տեղակալի պաշտոնի թափուր լինելը՝ կապված որոշ գործառույթներով այլ աշխատակիցների ծանրաբեռնելու հավանականության հետ:

Ինչ վերաբերում է պլանավորման գործընթացներին, ապա այս ուղղությամբ նկատելի են որոշակի բարելավման աշխատանքներ, այնուամենայնիվ փորձագիտական խումբը կարևորում է, որ տարեկան պլանավորումները բխեն ռազմավարական ծրագրից, որպեսզի արդյունքում հաշվետվությունների միջոցով հնարավոր լինի իրականացնել ՌԾ-ի գնահատում և նոր ՌԾ-ի արդյունավետ պլանավորում:

Գնահատելի է, որ ՄՈՒՀ-ը իրականացնում է արտաքին և ներքին միջավայրերի ուսումնասիրության գործընթացներ, այս տեսանկյունից փորձագիտական խումբը նշում է, որ կարևոր է, որ այդ տվյալները հիմք հանդիսանան շարունակական բարելավումների համար:

Փորձագիտական խումբը գիտակցում է, որ ուսանողների թիվը էականորեն ազդում է ՄՈՒՀ-ի ֆինանսական միջոցների գոյացման վրա, սակայն միևնույն ժամանակ կարևոր է շրջանավարտի իրացումը աշխատաշուկայում: Այս տեսանկյունից ՄՈՒՀ-ը կարող է ուսումնասիրել աշխատաշուկան և գործատուների կարիքները՝ հասկանալու ինչպիսի մենեջերներ են անհրաժեշտ գյուղատնտեսական ոլորտին և ծրագիրը ադապտացնել այդ ոլորտի համար: Նման քաղաքականության որդեգրումը կարող է բարելավել շրջանավարտների զբաղվածության ցուցանիշները՝ ապահովելով աշխատաշուկան պահանջարկված մասնագետներով:

Փորձագիտական խումբը գտնում է, որ գործող մասնագիտությունների և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը հասանելի դարձնելը, շրջանավարտների հաջողությունների վերաբերյալ տեղեկատվության տարածումը կնպաստի քոլեջի մասին իրազեկվածության և վստահելիության բարձրացմանը:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը գործընթացների ապահովման համար հիմնականում ապահովված է համապատասխան անձնակազմով, կառավարումն իրականացվում է կոլեգիալության սկզբունքով, վերհանվում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները, գործընթացները պլանավորվում են, մեծ մասում ներդրված է ՊԻԳԲ շրջափուլը, աշխատանքներն իրականացվում են ըստ կանոնակարգերի, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը բավարարում է չափանիշ 2-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 2-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

## III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:**

**Փաստեր**: Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջն իրականացնում է միջին մասնագիտական 8 կրթական ծրագիր, որից 4-ն ունեն գյուղատնտեսական ուղղվածություն՝ «Անասնաբուժություն», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Գյուղացիական /ֆերմերային/ տնտեսության կազմակերպում», «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգում և շահագործում», իսկ 4-ը ոչ գյուղատնտեսական ուղղվածություն՝ «Զբոսաշրջություն», «Հաշվապահական հաշվառում», «Մենեջմենթ» և «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում»: Վերջիններիս իրականացման հիմքում, ըստ ՄՈՒՀ-ի, արտաքին շահակիցների պահանջարկն է:
Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիմա վրա վերջին երկու տարվա ընթացքում քոլեջը, համայնքի կարիքները և մարզի զարգացման ծրագիրը վերլուծելով, ներդրել է «Զբոսաշրջություն» մասնագիտությունը: 2024-2025 ուստարվանից «Հայկական Կարիտաս» ՀԿ-ի հետ համագործակցությամբ կներդրվի նաև միջին մասնագիտական «Ջերմատնային տնտեսություն» մասնագիտությունը:

Կրթական ծրագրերից երկուսը՝ «Անասնաբուժություն», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», 2024-2025 ուսումնական տարվանից իրականացվելու է փորձարարական դուալ ձևաչափով՝ հիմքում ունենալով 2020 թվականից ներդրված ԱՀՈՒ փորձառությունը: Եվս երկու նոր մասնագիտություն՝ «Կաթնաֆերմայի կազմակերպում», «Գյուղատնտեսության մեքենայացում»,

հաջորդ ուստարվանից կներդրվի և կիրականացվի դուալ ձևաչափով: 2023-2024 ուսումնական տարում ՄՈՒՀ-ում կրթություն է ստացել շուրջ 388 ուսանող:

ՄՈՒՀ-ի դասախոսական կազմը մասնակցել է գյուղատնտեսության ոլորտի մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների վերանայման գործընթացին, «Անասնաբուժություն», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունների համար մշակել է ԱՀՈՒ, իսկ 2023 թվականին՝ փորձարարական դուալ ծրագրերի փաթեթներ:

Բացի հիմնական հանրակրթական առարկաներից և մասնագիտական մոդուլային ծրագրերից՝ ուսումնական պլաններում առկա են մասնագիտական նկարագիրը ամբողջացնող առարկաներ, որոնք ներդրվել են ընտրովի և պահուստային ժամերի հաշվին՝ ամբիոնների և դասավանդող մասնագետների առաջարկով: Օրինակ՝ «Մենեջմենթ» կրթական ծրագրում ընտրովի առարկա են ներդրել «Ֆինանսներ, դրամաշրջանառություն, վարկեր», «Հաշվապահական հաշվառման հիմունքներ» առարկաները, վերջիններիս ներդրումը չի բխում աշխատաշուկայի, շրջանավարտների և դասախոսների կարիքներից:

«Անասնաբուժություն» ԱՀՈՒ կրթական ծրագրում՝ որպես ընտրովի առարկաններ ներդրվել են «Օրգանիկ գյուղատնտեսություն» և «Ախտաբանական անատոմիա», իսկ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրում՝ «Օրգանիկ գյուղատնտեսություն»: Իսկ «Անասնաբուժություն» ՄԿԾ-ի նոր դուալ կրթական ծրագրային փաթեթը մշակելիս որպես ընտրովի ներդրել են «Ընդհանուր համաճարակաբանություն» առարկան, որը նախորդ վերանայման արդյունքում դուրս էր մնացել ՊԿՉ-ից, իսկ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» ՄԿԾ-ի փաթեթում ավելացրել են «Կաթի և կաթնամթերքի փորձաքննության իրականացում» առարկան՝ հաշվի առնելով վերջինիս կարևորությունը և արդիականությունը (ունեն շրջանավարտներ, ովքեր աշխատում են գործարանների լաբորատորիաներում): Կրթական ծրագրերում փոփոխությունները տեղի են ունենում նախորդ ԱՀՈՒ փորձառության շնորհիվ, գնահատվում և վերլուծում են դրական փորձը, բացթողումները, բացի այդ գործընթացները իրականացնելիս սերտ համագործակցում են գործատուների հետ:

Ուսումնասիրվող կրթական ծրագրերից «Մենեջմենթ»-ի ուսումնական պլանում առկա են 14 շաբաթ ուսումնական, 4 շաբաթ արտադրական և նախաավարտական պրակտիկաներ:

«Անասնաբուժություն» և «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» (դուալի ուսպլաններում)՝ պրակտիկաներ չկան, քանի որ նախկինում եղած պրակտիկ ժամերը բաշխվել են ըստ մոդուլների և վերածվել են գործատուի մոտ գործնական ուսուցման: 2020 թվականին հաստատված «Անասնաբուժություն» մասնագիտության ուսումնական պլանում ուսանողները ամբողջ ուսումնառության ընթացքում 32 շաբաթ ԱՀՈՒ պրակտիկա են անցել գործատուների մոտ, իսկ արդեն դուալ ձևաչափում նախատեսված է 40 շաբաթ աշխատանքային պրակտիկա գործատուի մոտ: Նման տրամաբանությամբ՝ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության ԱՀՈՒ-ն ներառել է 22 շաբաթ, իսկ դուալ ձևաչափում՝ 30 գործնական ուսուցման շաբաթներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսումնասիրվող երկու գյուղատնտեսական ծրագրերում՝ «Անասնաբուժություն» և «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», կան վերջնարդյունքներ, որոնք հնարավոր չէ ապահովել գործնական ուսուցման և պրակտիկաների ժամանակ: Օրինակ՝ «Անասնաբուժություն»-ում «Ձկների, դեկորատիվ և մորթատու գազանների հիվանդությունները և բուժման առանձնահատկությունները» մոդուլը ուսանողները սովորում են

տեսական նյութի տեսքով, տարածաշրջանում չկա նման կենդանիներ բուծող կազմակերպություն, որտեղ ուսանողները կարող են ապահովել սահմանված վերջնարդյունքը: Նույնը վերաբերում է «Անասնաբուժասանիտարական փորձաքննություն» մոդուլին: «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության ԱՀՈՒ գործընկերները տարածաշրջանում երեքն են, և կան ապրանքատեսակներ, որոնք այդ գործարանները չեն պատրաստում, օրինակ՝ պաղպաղակ, պահածոներ /մասնավորապես խտացրած/, և քոլեջը երբեմն ուսանողների համար կազմակերպում է մեկօրյա այցեր այն կազմակերպություններ, որտեղ նման արտադրանք կա:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների մեծ մասն իր ԱՀՈՒ-ն անցկացնում է հիմնականում նույն տեղում և կարողություններ ու հմտություններ է ձեռք բերում միայն տվյալ արտադրական գործընթացում, օրինակ՝ միայն պանիր պատրաստող գործարանում ուսանողը սովորում է պանիր պատրաստել, բայց ոչ օրինակ՝ կաթնաշոռ, թթվասեր և այլն: Փոխատեղումների պլանավորման աշխատանքները լիարժեքորեն և հավասարաչափ չեն իրականացվում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որոշ մասնագիտությունների գծով («Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտությունում) ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաներն անցկացվում են քոլեջում, քանի որ տարածաշրջանում չկան փոխադրումներ իրականացող կազմակերպություններ, իսկ «Մենեջմենթ» մասնագիտության արտադրական և նախաավարտական պրակտիկաներն անցկացվում են սուպերմարկետում կամ փոքր խանութում, Wildberries-ի գրասենյակում:

Դուալ կրթական ծրագրերի մասով քոլեջն ունի 14 գործատու՝ 3 «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության, իսկ 11 «Անասնաբուժություն» մասնագիտության գծով: Գործատուների թիվն ավելացել է՝ հաշվի առնելով դուալ կրթաձևի շրջանակներում Մավետա ընկերության, քոլեջի և գործատուների համագործակցությունը:

ԱՀՈՒ օրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ըստ ուսումնական պլանի առանձնացված մոդուլների՝ ուսանողները գրել են ակտիվ պրակտիկայի հաշվետվություն, որտեղ վերլուծել են գործատուների մոտ իրենց ձեռք բերած կարողությունները, նկարագել աշխատանքային ողջ գործընթացը: Ինչ վերաբերում է «Մենեջմենթ» մասնագիտության պրակտիկայի օրագրերին, ապա վերջիններս վերլուծական, գործնական կարողությունները մատնանշող չեն, պարզ շարադրանքով ներկայացված է օրվա դասի թեման: Ուսումնասիրած օրագրերը կրկնում են իրար:

Քոլեջում դասախոսների կողմից կիրառվող դասավանդման մեթոդների ընտրության միասնական մոտեցում առկա չէ, սակայն, ըստ ուսումնասիրած փաստաթղթերի, ԱՀՈՒ դասապրոցեսի ժամանակ ընտրված մեթոդները ինտերակտիվ են, գործնական, հմտություն և կարողություն ձևավորող, քանի որ ստացվող վերջնարդյունքների մեծ մասն ուսանողները ձեռք են բերում գործնական միջավայրում՝ իրական գործունեությամբ: Իսկ ինչ վերաբերում է մյուս կրթական ծրագրերին, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դեռևս կիրառվում են մեծամասամբ ավանդական մեթոդները:

Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ դասավանդման գործընթացում դասախոսները կարևորում են ուսանողների վերլուծական և հետազոտական մտքի զարգացումը, դրանք արտահայտված են ուսումնառության նյութերում առկա առաջադրանքներում, դիպլոմային աշխատանքներում: Օրինակ՝ «Տնտեսագիտություն» առարկայից ուսանողներին

հանձնարարվում է, ուսումնասիրելով և վերլուծելով իրենց տնտեսությունը: Ուսանողների մոտ դասախոսը ձևավորում է բիզնես-մտածողություն: «Ագրոնոմիա» առարկայի շրջանակում ուսանողներին հանձնարարվում է ուսումնասիրել օրգանիկ գյուղատնտեսության արտադրանքները, վերջիններս պայմանական հաճախորդին պետք է համոզեն, թե ինչու օգտվել հենց օրգանիկ ապրանքներից: Առաջադրանքն իրականացնում են դերային խաղի միջոցով:

Հետազոտական կարողությունների զարգացման նպատակով ԱՀՈՒ ձևաչափով իրականացվող երկու մասնագիտություններում ավարտական ամփոփիչ ատեստավորումը դիպլոմային աշխատանքն է: Վերջիններիս ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թեմաները տարբեր են՝ կախված տնտեսությունում եղած իրավիճակներից: Դիպլոմային աշխատանքները վերլուծական են, գործնական հմտություններ ձևավորող: Կան այնպիսի աշխատանքներ, որոնք առաջարկում են գյուղատնտեսության մեջ ներառել նորարարություններ՝ հեշտացնելով ֆերմերների աշխատանքը: Դասապրոցեսի ընթացքում ուսանողները դասախոսի հետ պատրաստում են թթու կաթնամթերքների տարբեր տեսակներ (մածուն, յոգուրտ), կաթնաշոռ, պանրի տարբեր տեսակներ (չանախ, չեչիլ, սուլուգունի), թարմ և հորած պանիրներ տարբեր համեմուքներով (թարխուն, ուրց):

Ընթացիկ գնահատման նպատակով ուսանողներին առաջադրվում են նաև ռեֆերատիվ աշխատանքներ, վերջիններիս ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք չեն պարունակում վերլուծական, ինքնուրույն մաս, առավելապես համացանցից վերցված տեսական նյութեր են:

ՄՈՒՀ-ում որպես այդպիսին գնահատման միասնական մոտեցում առկա չէ: Ամփոփիչ հարցաշարերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ որոշ մասնագիտությունների գծով կան և՛ տեսական գիտելիքները, և՛ գործնական հմտությունները ստուգող հարցեր, օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» մասնագիտությունների պետական հարցաշարերում կան հաշվարկային մասեր: Իսկ «Մենեջմենթ» մասնագիտության պետական քննական հարցաշարում առկա են միայն ուսանողների տեսական գիտելիքները ստուգող հարցեր, ինչը պարզ դարձավ նաև պետական քննության դիտարկման ժամանակ:

Մոդուլային ծրագրերում ներկայացված է յուրաքանչյուր արդյունքի գնահատման ձևը, որտեղ, օրինակ՝ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» և «Անասնաբուժություն» մասնագիտություններում գերակշռում է գործնական առաջադրանքի միջոցով գնահատումը, իսկ «Մենեջմենթ» մասնագիտության համար կիրառվում են թեստային առաջադրանքները: Գնահատման թերթիկների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ յուրաքանչյուր արդյունքի գնահատման համար առանձնացված են բանավոր հարցեր և մեծ մասում առկա է նաև գործնական առաջադրանք: Յուրաքանչյուր կիսամյակի վերջում մասնագիտական մոդուլները ևս մեկ անգամ չեն ամփոփվում, դրանք ավարտվում են ստուգարքով: ՄՈՒՀ-ում ընթացիկ գնահատման հստակ չափանիշներ սահմանված չեն: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները կարող են փոխել իրենց ընթացիկ գնահատականը տեղում՝ դիմելով կուրսղեկների օգնությանը: Գնահատականի բողոքարկման դեպքեր չներկայացվեցին:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսական կազմը գնահատելիս կարևորում է հիմնականում ուսանողի ձեռքբերած կարողությունները, յուրաքանչյուրն ունի իր գնահատման մոտեցումները: Այդուհանդերձ պարզ դարձավ, որ գրագողության դեմ պայքարի

մեխանիզմներ առկա չեն քոլեջում, ինչը ակնառու էր «Մենեջմենթ» մասնագիտության պետական քննության ժամանակ։

Ուսանողները գնահատվում են նաև պրակտիկայի ընթացքում։ Գնահատականներն արտահայտված են պրակտիկայի օրագրերում։ Քոլեջը մշակել է ԱՀՈՒ գործնական կարողությունների գնահատման սանդղակ, որով էլ իրականացվում է պրակտիկայի գնահատումը։

ՄՈՒՀ-ը կրթական ծրագրերի բենչմարքինգ չի իրականացրել, մշտադիտարկման և բենչմարքինգի իրականացման կարգ և հստակ մեխանիզմներ ներդրված չեն։ Սակայն նույն կրթական ծրագրերի շրջանակում համագործակցել է Գավառի պետական գյուղատնտեսական, Կապանի պետական գյուղատնտեսական, Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջների հետ։ Վերջինիս հետ իրականացվել է փոխադարձ այցելություններ՝ ուսանողների և դասախոսների մասնակցությամբ։ Բացի այդ նոր ուսումնական տարվանից իրականացվող դուալ կրթական ծրագրերի հետ կապված ուսումնասիրել է Շվեցարիայի և Ֆրանսիայի փորձը՝ գործատուների կողմից ուսանողներին աշխատանքի ընդունելու և նրանց վճարելու տեսանկյունից։

ՄՈՒՀ-ը մշակել է ՄԿԾ-ների մշտադիտարկման կանոնակարգ։ Փորձագիտական այցից պարզվեց, որ ՄԿԾ-ների փոփոխությունների վերաբերյալ քննարկումներ տեղի են ունենում ամբիոնների, ուսումնամեթոդական խորհրդի նիստերի ժամանակ։ ՄԿԾ-ներում իրականացված փոփոխությունները հիմնականում վերաբերում են ընտրովի և նախասիրական ժամերին։ Առավել առանցքային փոփոխություններ են դիտարկվել ուսումնասիրվող երկու մասնագիտության՝ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» և «Անասնաբուժություն», ՄԿԾ-ներում, առաջին փոփոխությունները կախված են այդ մասնագիտությունները ԱՀՈՒ ձևաչափով իրականացնելու հետ, որտեղ հատուկ և ընդհանուր մոդուլներից առանձնացվել են կարևոր վերջնարդյունք ապահովողները և ներառվել ԱՀՈՒ-ում, իսկ երկրորդ փոփոխությունը կախված է դուալ ձևաչափի ներդրման հետ, երբ ամբողջությամբ վերափոխվել են ՄԿԾ-ները, ուսումնական պլանները։

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը վերջին տարիներին ձգտում է կրթական ծրագրերը ներդնել տարածաշրջանի պահանջարկի և ունեցած կարիքների հիման վրա։ Վերջին տարիներին քոլեջ-գործատու կապը առավել արտահայտված է ուսումնական գործընթացներում (խոսքն առավելապես վերաբերում է գյուղատնտեսական մասնագիտություններին), որի արդյունքում ուսանողները ստանում են ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև ներկա են գտնվում արտադրական գործընթացներին, որը զարգացնում է նաև վերջիններիս գործնական կարողությունները։

Դրական է, որ որոշ կրթական ծրագրերում տեղ են գտել այնպիսի ընտրովի առարկաներ, որոնք անհրաժեշտ են մասնագետի ամբողջական որակավորման համար։ Այդուհանդերձ ոչ բոլոր ՄԿԾ-ների ընտրովի առարկաներն են բխում աշխատաշուկայի կարիքներից և դրանցում դրված չէ ընտրության հստակ տրամաբանություն, վերջինս կարող է խոչընդոտել շրջանավարտի մրցունակությանը և գործատուի կողմից պահանջված կարողությունների ձեռքբերմանը։

Փորձագիտական խումբը նշում է, որ կրթական ծրագրերում երբեմն նկատելի է, որ սահմանված ոչ բոլոր վերջնարդյունքներն են շրջանավարտների կողմից ձեռքբերվում լիարժեքորեն՝

պայմանավորված գործատուների ունեցած արտադրական միջավայրով: Փորձարարական դուալ կրթական ծրագրերը ներդնելիս ՄՈՒՀ-ը անհրաժեշտություն կունենա քարտեզագրելու ՄԿԾ վերջնարդյունքները գործընկերների ունեցած ռեսուրսային բազայի հետ՝ համապատասխանեցնելով սահմանված վերջնարդյունքները գործատուի ունեցած արտադրական միջավայրին: Բացի այդ, քոլեջը կարիք կունենա ներդնելու փոխատեղման ճկուն քաղաքականություն, որի արդյունքում ուսանողները հնարավորություն կունենան լինելու տարբեր արտադրական միջավայրերում և տիրապետելու տարբեր արտադրանքների պատրաստմանը: Արդյունքում քոլեջը կպատրաստի իսկապես մրցունակ մասնագետներ: Հաշվի առնելով ՄԿԾ-ների փորձարարական լինելը՝ ՄՈՒՀ-ն ունի ՄԿԾ-ներում փոփոխությունների իրականացման առավել մեծ հնարավորություններ, որը կարող է նպաստել առավել ճկուն և գործատուի կարիքից բխող շրջանավարտի պատրաստմանը:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ ԱՀՈՒ ձևաչափում սովորող ուսանողների օրագրերի ձևաչափը թույլ է տալիս չափել ուսանողների ձեռքբերած հմտությունները և առաջընթացը: Սակայն նույնը չի կարելի փաստել «Մենեջմենթ» մասնագիտության պրակտիկաների մասին: Փորձագիտական խումբը գտնում է, որ եղած լավ օրինակը պետք է տարածել նաև այլ ՄԿԾ-ներում:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ դասապրոցեսի ընթացքում կիրառվող մեթոդները հիմնականում ինտերակտիվ են, գերակշռում են գործնական հմտություններ ձևավորող առաջադրանքները, որոնց արդյունքում հնարավոր է դառնում զարգացնել ուսանողների վերլուծական, ստեղծագործական, ինքնուրույն որոշումներ կայացնելու հմտությունները: Դրական է, որ դիպլոմային աշխատանքները հիմնված են իրական դեպքերի և ուսումնասիրությունների վրա, ինչը ևս մեկ անգամ փաստում է ուսանողակենտրոն ուսուցման մասին:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ գնահատման ժամանակ դասախոսները մեծ ուշադրություն են դարձնում ուսանողների ձեռքբերած կարողություններին, յուրաքանչյուրն իր մոտեցումն ունի, այնուամենայնիվ դրանք առավել համակարգային և ուսանողների համար առավել թափանցիկ դարձնելու անհրաժեշտություն կա: Բացի այդ քոլեջը պետք է մշակի գրագողության դեմ պայքարի հստակ քայլեր և մեխանիզմներ, դրանք ներդնի ոչ միայն ընթացիկ, այլև ամփոփիչ գնահատման մեջ: Կանոնակարգված գնահատման համակարգի, չափանիշների առկայությունը կնպաստի գնահատման համակարգի միասնականացմանը, ինչպես նաև հետագայում հիմք կհանդիսանա գնահատման համակարգի շարունակական բարելավման համար:

Դրական է, որ որոշ մասնագիտությունների ընթացիկ գնահատման թերթիկներում, պետական ավարտական հարցաշարերում առկա են ինչպես տեսական գիտելիքները, այնպես էլ գործնական կարողությունները ստուգող առաջադրանքներ, այդուհանդերձ նման դրական օրինակները քիչ են, և քոլեջը՝ կիրառելի կարողություններով և հմտություններով օժտված մասնագետներ պատրաստելու և այդ կարողությունները չափելու համար կարիք կունենա վերանայելու ընթացիկ և ավարտական ստուգման մոտեցումները, որպեսզի դրանք դառնան ոչ միայն գիտելիք ստուգող, այլև կարողություն:

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ քոլեջը նույն կրթական ծրագրերի շրջանակում համագործակցել է մի շարք քոլեջների հետ, այնուամենայնիվ անհրաժեշտ է ակտիվացնել այդ համագործակցությունը, որը հետագայում հիմք կհանդիսանա կրթական

ծրագրերի բենչմարքինգի համար։ Դրական է, որ դուալի հետ կապված միջազգային ուսումնասիրությունները հնարավորություն կտան քոլեջ-գործատու-ուսանող կապը դարձնել առավել ինստիտուցիոնալ և փոխշահավետ։

Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ ՄՈՒՀ-ը ունի կրթական ծրագրերի մշտադիտարկման, բարելավման փորձառություն, այդուհանդերձ անհրաժեշտ է բարելավումներն իրականացնել հիմքում ունենալով առավել խորը վերլուծություններ, մասնավորապես՝ գործընկեր կազմակերպությունների հնարավորությունների, շրջանավարտների զբաղվածության մասով։

**Եզրահանգում**։ Հաշվի առնելով, որ Ստեփանավանի Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջն իրականացնում է իր առաքելության համապատասխան և տարածաշրջանի աշխատաշուկայում պահանջարկ ունեցող մասնագիտություններ, կրթական գործընթացներում ակտիվ մասնակցում են գործատուները, ուսումնառության ընթացքում կիրառվում են ինտերակտիվ մեթոդներ, ուսանողներին տրվում են ինքնուրույն, հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքներ, որոնք հիմնված են իրական օրինաների վրա, իրականացվում են ՄԿԾ-ների մշտադիտարկումներ և բարելավումներ, ուստի փորձագիտական խումբը գտնում է, որ Ստեփանավանի Ա.Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը բավարարում է չափանիշ 3-ի պահանջներին։

**Եզրակացություն:** Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար**։

## IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:**

**Փաստեր**։ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում ուսանողների հավաքագրման նպատակով իրականացվում են մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումներ. ձևավորված խմբերն այցելում են քաղաքի և հարակից համայնքների դպրոցներ, ներկայացնում քոլեջը, մասնագիտությունները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողների հավաքագրման աշխատանքներում ներգրավվում են ինչպես վարչական (դասատիարակչական աշխատանքների գծով տեղակալը, կարիերայի խորհրդատուն), այնպես էլ դասախոսական անձնակազմից անդամներ, ուսանողներ և շրջանավարտներ։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին տարիներին դիմորդների թվի դինամիկ աճ է նկատվում հատկապես «Մենեջմենթ» մասնագիտության գծով, որը, ըստ քոլեջի ներկայացուցիչների, պայմանավորված է վերջինիս արդիականությամբ և պահանջարկով։ Ուսանողների թվի աճը պայմանավորված է նաև նոր մասնագիտության ներդրմամբ՝

«Զբոսաշրջություն»։ Ըստ քոլեջի ինքնավերլուծության՝ քոլեջում հիմնական և միջնակարգ կրթության հիմքով սովորում է 388 ուսանող։

Վերջին 5 տարիների վերլուծությունների արդյունքները ցույց են տալիս, որ ուսանողների հեռացումների հիմնական պատճառներ են հանդիսացել սոցիալական վիճակը, արտագաղթը, եղել են դեպքեր, երբ ուսանողները հեռացվել են ներքին կարգապահական կանոնները խախտելու պատճառով։ Հեռացումների քանակը նվազեցնելու համար քոլեջը մի շարք քայլեր է իրականացնում՝ անհատական զրույցներ, սոցիալական խնդիր ունեցող ուսանողների համար պրակտիկայի վայր տեղափոխող տրանսպորտային միջոցի ներդրում։ Բացի այդ, որպես բարձր առաջադիմության մոտիվացիա է ծառայում երկու մասնագիտության՝ «Կաթ կաթնամթերքի տեխնոլոգիա», «Անասնաբուժություն», շրջանակներում ուսանողներին տրամադրվող 50 . 000 դրամ կրթաթոշակը։

Քոլեջն ուսանողների կրթական կարիքների գնահատումն իրականացնում է Որակի ապահովման կենտրոնի, կարիերայի խորհրդատուի, կուրսղեկների, Ուսանողական և Ծնողական խորհուրդների միջոցով։ Որպես ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմ են դիտարկվում ֆոկուսխմբային քննարկումները, հարցումները, բացի այդ քոլեջում առկա է առաջարկությունների արկղ։ Ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ տեսանելի է կապը վերհանված կարիքների և բարելավման նախատեսված գործողությունների միջև։

Ուսանողների կարիքների վերհանման գործընթացում կարևոր օղակ է նաև ՈՒԽ-ն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ն համագործակցում է կուրսղեկների, դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրենի հետ և այն հարցերին, որոնց ՈՒԽ-ն չի կարող լուծում տալ, լուծվում են վերջիններիս աջակցությամբ։ Նման օրինակներից է առաջարկությունների արկղում ուսանողների կողմից բարձրացված դասամիջոցների ավելացման, սնման կետի, դասախոս-ուսանող հարաբերությունների հետ կապված հարցերը, որոնք լուծում են ստացել։

Քոլեջն ունի նաև «Շրջանավարտների միություն», որտեղ ներգրավված շրջանավարտները հիմնականում զբաղվում են շարունակական կրթության վերաբերյալ ուսանողներին տեղեկատվություն տրամադրելով։

Քոլեջում ըստ ուսումնական պլանի իրականացվում են նախաքննական խորհրդատվություններ, որոնց համար սահմանված է հստակ ժամանակացույց։ Ըստ քոլեջի կողմից իրականացված հարցումների՝ ուսանողները կարևորում են խորհրդատվական պարապմունքների իրականացումը, և նրանց 30% -ն ընդգրկված է այդ պարապմունքներում։

Ուսանողների համար նախատեսված առանձին լրացուցիչ պարապմունքներ օտար լեզուների կարողությունների զարգացման ուղղությամբ քոլեջում չեն իրականացվում, սակայն, ինչպես պարզ դարձավ փորձագիտական հանդիպումներից, ըստ անհրաժեշտության դասախոսները պատրաստակամ են աջակցելու ուսանողներին։ Քոլեջից դուրս «Զբոսաշրջություն» մասնագիտության ուսանողների համար կազմակերպվել են պարտադիր ֆրանսերենի պարամունքներ, որոնք իրականացվել են դասերից հետո։ Վերջինիս արդյունավետությունը քոլեջի կողմից չի գնահատվել։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ազատ են դիմելու վարչական անձնակազմին իրենց հուզող հարցերով։ Այս ուղղությամբ չկա սահմանված հստակ ժամանակացույց, սակայն առկա է դիմելու ընթացակարգը կարգավորող փաստաթուղթ։ Քոլեջը

հարցումների միջոցով գնահատել է նաև վարչական անձնակազմից ուսանողների բավարավածությունը, ըստ որի ուսանողների 98/%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, իսկ 65 տոկոսը բավարարված է այդ ծառայություններից:

Ուսանողների և շրջանավարտների կարիերային նպաստելու նպատակով քոլեջում առկա է կարիերայի ստորաբաժանում: Կարիերայի խորհրդատուն իրականացնում է շրանավարտների մասնագիտական հետագծի ամենամյա վերլուծություններ, ունի շուրջ 400 շրջանավարտի տվյալների բազա, կազմակերպում է ոչ ֆորմալ դասընթացներ տարբեր թեմաներով, այցելում է դպրոցներ մասնագիտական կողմնորոշման նպատակով, տարածաշրջանի ճանաչված գործատուներին տարին երկու անգամ հրավիրում է քոլեջ՝ ուսանողների հետ վարպետաց-դասեր իրականացնելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կարիերայի ստորաբաժանման շնորհիվ անցած ուսումնական տարի աշխատանքի է ընդունվել 2 շրջանավարտ:

Քոլեջը շրջանավարտներին աշխատանքի տեղավորման հետ կապված չի կնքել համաձայնագրեր հաստատությունների հետ թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման շուրջ: Կարիերայի պատասխանատուն երբեմն թափուր աշխատատեղերի վերաբերյալ իրազեկում է շրջանավարտներին, այդ թվում նաև քոլեջում առկա թափուր հաստիքների վերաբերյալ: Կարիերայի պատասխանատուն յուրաքանչյուր կիսամյակ իրականացրել է իր գործունեության արդյունքների վերլուծություն, որտեղ ներկայացվել են վերջին տարիներին ուսանողների զբաղվածության տվյալները՝ իրենց մասնագիտությամբ և ոչ մասնագիտությամբ աշխատողների, բուհում սովորողների, զինվարական ծառայության մեկնած, արտերկրում բնակվող, աշխատանք փնտրող շրջանավարտների վերաբերյալ:

Շրջանավարտների հետագծի վերաբերյալ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերջին 5 տարվա կտրվածքով 293 շրջանավարտներից 93-ը շարունակում են ուսումը բուհերում՝ համապատասխան մասնագիտությամբ, 139-ը աշխատում են, որից 37-ը իրենց մասնագիտությամբ: Զբաղվածության ապահովման տեսանկյունից լավագույն դիրքերում են գտնվում «Հաշվապահական հաշվառում» (իր մասնագիտությամբ աշխատում է 11 շրջանավարտ 5 տարվա կտրվածքով), «Գյուղացիական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում» (իր մասնագիտությամբ աշխատում է 7 շրջանավարտ 3 տարվա կտրվածքով) և «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» (իր մասնագիտությամբ աշխատում է 7 շրջանավարտ 3 տարվա կտրվածքով): Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ շրջանավարտների մեծ մասն էլ համարվում են ինքնազբաղներ, վերջիններս ունեն սեփական տնտեսությունները և քոլեջից ստացած իր մասնագիտական գտելիքերը ներդնում են իրենց սեփական տնտեսության զարգացման մեջ: Ինքնազբաղների վերաբերյալ գրանցված և վերլուծված հստակ տվյալներ առկա չեն: Անհրաժեշտ է նշել, որ քոլեջը պարբերաբար թարմացնում է շրջանավարտների բազան:

ՈւԽ-ն իր աշխատանքները քննարկում և պլանավորում է դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հետ, հետագայում նաև հաշվետու է վերջինիս: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նիստերի ընթացքում ուսանողների իրավունքների խախտման կամ պաշտպանությանն ուղղված հարցեր չեն քննարկվել: Կառույցի կողմից հիմնականում կազմակերպվում են կրթամշակութային միջոցառումներ, արշավներ:

Քոլեջում գործող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակող ծառայությունների գնահատման և դրանց որակի ապահովման մեխանիզմների արդյունավետությունը գնահատվում է հարցումների, քննարկումների, առաջարկությունների արկղի միջոցով:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրականորեն նշում է, որ քոլեջն ունի ուսանողների հավաքագրման հստակ մեխանիզմներ և մատնանշում է, որ այդ գործընթացներին մասնակցում են նաև ուսանողներն ու շրջանավարտները: Սա խոսում է իր կարևոր շահակիցների շրջանում քոլեջի ունեցած բարձր վարկանիշի մասին:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ առաջին հավատարմագրումից հետո արձանագրվել է ուսանողների թվի աճ, ինչը փաստում է նաև դիմորդների հավաքագրման մեխանիզմների արդյունավետության վերաբերյալ:

Փորձագիտական խումբը դրականորեն արձանագրում է, որ քոլեջում ներդրված են ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմներ, ուսանողներն իրենց համարում են իրենց ձայնը լսելի: Հատկանշական է, որ ուսանողների իրավունքների պաշտպանության գործընթացում ներգրավված են մի քանի կարևոր օղակներ՝ քոլեջի ՈՆԱ-ն, կուրսղեկները, ՈՒԽ-ն, «Շրջանավարտների միություն»-ը, Ծնողական խորհուրդը, ինչը նպաստում է ուսանողների կարիքների արագ բացահայտմանը և խնդիրների լուծմանը:

Ինչ վերաբերում է ուսանողներին լրացուցիչ խորհրդատվական ծառայություններ մատուցելուն, լեզվական իմացության մակարդակը բարձրացնելուն, ապա այս ուղղությամբ քոլեջը կարիք կունենա ներդնելու նաև օտար լեզվի իմացության բարելավման լրացուցիչ դասընթացներ, քանի որ արդեն ձևավորվող միջազգային համագործակցությունը ենթադրում է շարժություն ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների շրջանում: Օտար լեզվի կարողությունների զարգացումը կնպաստի ոչ միայն քոլեջի միջազգայնացմանը, այլև շրջանավարտների մրցունակության բարձրացմանը աշխատաշուկայում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ կարիերայի խորհրդատուն հետևում է շրջանավարտների կարիերայի հետագծին, ունի շրջանավարտների տվյալների բազա, այնուամենայնիվ որոշակիորեն մտահոգիչ է, որ առկա են մասնագիտական զբաղվածության ցածր ցուցանիշներ: Քոլեջն այս ուղղությամբ անհրաժեշտություն կունենա ուսումնասիրելու և խորքային վերլուծել այդ ցուցանիշների պատճառները: Զբաղվածության վերաբերյալ առավել ընդգրկուն պատկեր ստանալու համար առավել նպատակահարմար կլինի հաշվառելու նաև ինքնազբաղվածներին: Արդյունքում հնարավոր կլինի իրականացնել փաստարկված վերլուծություններ և բացահայտել առավել հաջողված և զբաղվածություն ապահովող կրթական ծրագրերը:

**Եզրահանգում**:Հաշվի առնելով, որ Ստեփանավանի Ա. Քալանթանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում առկա են ուսանողների ներգրավման հստակ մեխանիզմներ, գրանցվել է ուսանողների թվի զգալի աճ, ուսանողների շահերը պաշտպանված են, վերջիններս ստանում են իրենց անհրաժեշտ խորհրդատվությունը, տնօրենությունը ակտիվ համագործակցում է ուսանողների հետ և կարևորում է վերջիններիս կարծիքը, ուստի փորձագիտական խումբը 4-րդ չափանիշը գնահատում է բավարար:

**Եզրակացություն:**Ստեփանավանի Ա. Քալանթանի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

## V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:**

**Փաստեր**: Ըստ 2020-2025 թթ.-ի ՌԾ-ի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է ՄԿԾ-ներն իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական և ուսումնաօժանդակ կազմով ապահովում, որի իրականացման համար սահմանել է 9 ռազմավարական խնդիր, որոնցից են դասախոսների մանկավարժական գործունեության գնահատման ցուցանիշների գործուն համակարգի ներդրումը, վերապատրաստման դասընթացներին դասախոսների ներգրավման մեխանիզմների սահմանումը, խոստումնալի կադրերի խրախուսման, աջակցման, պահպանման, նոր կադրերի ներգրավման գործընթացների իրականացումը, սկսնակ դասավանդողների մենթորության քաղաքականություն և ընթացակարգի մշակումը և այլն:

Քոլեջի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ Մանկավարժական աշխատողների նշանակման մրցութային կարգի՝ հավասար միավորներ հավաքած թեկնածուներից նախապատվությունը տալով օտար լեզուների տիրապետող և համակարգչային հմտություններ ունեցող մասնագետներին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թափուր հաստիքների համալրման համար հայտարարվում և իրականացվում են մրցույթներ, որոնց մինչ այժմ հիմնականում **1** թեկնածու է մասնակցել: Մրցույթի ընթացքում տեղի է ունենում բանավոր հարցազրույց թեկնածուի հետ, որից հետո մրցութային հանձնաժողովի քվեարկությամբ հաղթող ճանաչված թեկնածուն համալրում է քոլեջի դասախոսական կազմը:

Վերջին 3 տարիների ընթացքում յուրաքանչյուր տարի քոլեջում աշխատանքի է ընդունվել համապատասխանաբար 17, 18, 19 դասախոս:

Քոլեջում դասավանդում են 47 դասախոս, վերջիններս ունեն բարձրագույն կրթություն: ՄՈՒՀ-ի 73%-ը հիմնական աշխատողներ են: Կրթական ծրագրեր իրականացնելու նպատակով քոլեջը ներգրավել է նաև մի քանի գործատու դասավանդողների: Վերջին 5 տարիներին քոլեջն ունեցել է 1-3 գործատու դասախոս: Ներկայումս քոլեջն ունի գյուղատնտեսության ոլորտի 1 գործատու դասախոս:

Դասախոսական կազմի ընտրության ու համալրման գործընթացի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դասախոսների մասնագիտական որակավորումները համապատասխանում են

դասավանդվող առարկաներին և մոդուլներին: Եթե նախորդ հավատարմագրման ընթացում մեկ դասախոսը դասավանդում էր մինչև 10 մոդուլ, ապա երկրորդ շրջափուլում դասավանդողները միջինում դասավանդում են 2-3 մոդուլ:

2023թ.-ին քոլեջում հաստատվել է «Դասախոսական կազմի գնահատման» ընթացակարգ՝ համաձայն որի 2 փուլով իրականացվում է դասախոսների գնահատում. ինքնագնահատում և գնահատում ամբիոնի կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ըստ կարգի դասախոսական կազմի գնահատում արդեն իրականացվել է: Ինչպես նաև պարզ դարձավ, որ քոլեջում իրականացվում է դասախոսների գնահատում ուսանողների կողմից:

Դասախոսական կազմի գնահատման մեխանիզմ է նաև դասալսումը: Քոլեջն ունի «Դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ», դասալսումների և փոխադարձ դասալսումների ժամանակացույց, դասալսումների անցկացման ձևաթերթ և գնահատման թերթիկ: Փոխադարձ դասալսումներ բացի իրականացվում են նաև դասալսումներ ամբիոնի վարիչների, որակի ապահովման պատասխանատուի կողմից: Դասալսումների արդյունքները գրանցվում են վերոնշյալ ձևաթերթում, իրականացվում է դասի գնահատում, որից հետո քննարկում է իրականացվում տվյալ առարկայի դասախոսների հետ (ուսումնառության նյութերի և մեթոդների կիրառում, դասի փուլերի միջև սահուն անցում, ժամանակի կառավարում, ուսանողների կարգապահություն և այլն):

Դասավանդողների գնահատման ևս մեկ մեխանիզմ է պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը, որտեղ ներկայացվում են ուսանողների գիտելիքների և դասավանդողների պատրաստվածության մասին բնութագրական գնահատականներ:

Քոլեջում իրականացվում է նաև դասախոսների գնահատում ուսանողների կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ամբիոններում քննարկվում են գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներն ու տրվում դրանց հնարավոր լուծումները. որոշվում է, թե որ դասախոսն ունի ըստ նշանակության վերապատրաստման կամ փորձառու դասախոսի հետ աշխատանքի կարիք: Ամբիոններում մշակվում են ժամանակացույցներ, ըստ որի, գնահատումների արդյունքներից ելնելով, դասախոսների հետ կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ՝ առավել փորձառու դասախոսների հետ փորձի փոխանակման նպատակով:

Քոլեջի նախահաշվի և բյուջեի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջը դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների համար ծախսեր չի կատարել: Քոլեջի դասախոսները պարբերաբար մասնակցում են ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին: 2024 թվականին ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից իրականացված մեթոդական վերապատրաստումներին մասնակցել են քոլեջի 9 դասախոսներ: Տնօրենը և 2 դասախոս մասնակցել են ՄԱՎԵՏԱ ծրագրի շրջանակներում կազմակերպված դասընթացին՝ միտված դուալ կրթական համակարգի ներդրմանը և նոր կրթական ծրագրերի մշակմանը: Ինչպես նաև նույն ծրագրի շրջանակներում քոլեջի տնօրենը, ՈԱՊ–ը և «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» և «Անասնաբուժություն» մասնագիտությունների դասախոսները մասնակցել են կազմակերպչական, մեթոդական և մասնագիտական վերապատրաստումների: Դասախոսական և վարչական անձնակազմի անգլերեն և ռուսերեն լեզուների իմացության մակարդակը բարձրացնելու նպատակով քոլեջը կազմակերպում է ներքին վերապատրաստումներ: Վերապատրաստումների

մասնակցելու, կարիերայի կողմնորոշմանը միտված աշխատանքներ, ինքնագնահատում և մոնիթորինգ իրականացնելու նպատակով հուշագիր է ստորագրել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի, Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, Հայ օգնության ֆոնդի, Սիվիտտա Էյէմ ՓԲԸ-ի հետ: Հարկ է նշել, որ ոչ գյուղատնտեսական մասնագիտությունների գծով դասախոսների կատարելագործման աշխատանքները քոլեջում թույլ են:

Անդրադառնալով դասախոսական կազմի կայունությանը՝ հարկ է նշել, որ դասախոսական կազմը երիտասարդացման միտում ունի: Ներկայումս քոլեջում դասավանդողների միջին տարիքը 44 տարեկան է: Քոլեջում կա արտագաղթով և ցածր աշխատավարձով պայմանավորված կադրային հոսունություն: Արտահոսքը որոշակիորեն կանխելու նպատակով քոլեջն իրականացրել է աշխատավարձերի բարձրացում 5-7%-ով: Քոլեջում գործում է «Տնօրենի, մանկավարժների պարգևատրման, նյութական խրախուսման և պաշտոնից ազատման» կանոնակարգ: Քոլեջում պարբերաբար իրականացվում են դասախոսների պարգևատրումներ և նյութական խրախուսումներ՝ համաձայն կանոնակարգի դրույթների: Քոլեջում գործում է դասախոսների բազա, որտեղ առկա են մոտ տասնյակ դասախոսներ՝ առավելապես հանրակրթական առարկաններ դասավանդողների:

Քոլեջի հաստիքային վարչական աշխատակիցները իրենց վարչական գործառույթների իրականացմանը զուգընթաց ներգրավված են նաև դասավանդման գործընթացներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը փորձում է ապահովել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը՝ ներգրավելով տարբեր վերապատրաստումներում: Սկսնակ դասավանդողների մենթորության կարգ դեռ չի մշակվել: Վերջիններս աջակցություն են ստանում ամբիոնի կողմից՝ ընթացիկ առաջացած կարիքով պայմանավորված:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ Քոլեջը դասախոսական կազմի ընտրությունն իրականացնում է մրցութային կարգով սահմանված օրենսդրական պահանջներին համապատասխան: Կարևոր է նաև, որ քոլեջը հավասար միավորներ հավաքած թեկնածուներից նախապատվությունը տալիս է օտար լեզուների տիրապետող և համակարգչային հմտություններ ունեցող մասնագետներին:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում, որ քոլեջն ունի դասավանդման որակի գնահատման ընթացակարգերը և գործիքակազմերը ներառող փաստաթղթեր, այնուամենայնիվ փորձագիտական խումբը կարևորում է հավաքագրված տվյալների գործնականում նպատակային կիրառումը՝ կատարելագործման աշխատանքների պլանավորումը և իրականացումը ապահովելու համար:

Գնահատելի է, որ քոլեջը որդեգրել է դասախոսների երիտասարդացման քաղաքականության: Սակայն փորձագիտական խումբը կարևոր է համարում նաև սկսնակ դասավանդողների մենթորության կարգի մշակումը և արդյունավետ կիրառումը՝ վերջիններիս համակարգված աջակցություն ցուցաբերելու և կրթական գործընթացում արագ ինտեգրելու նկատառումներով, հաշվի առնելով վերջին 3 տարիներին 17-19 նոր դասախոսների ներգրավումը ուսումնական գործընթացում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը փորձել է դասախոսական կազմում ներգրավել նաև պրակտիկ ոլորտի մասնագետներ, այս ուղղությամբ դեռևս անհրաժեշտ է

աշխատանքներ իրականցնել վերջիններիս քանակն ավելացնելու համար, նամանավանդ այն ՄԿԾ-ներում, որոնք ԱՀՈՒ ուսուցմամբ չեն իրականացվում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում դասախոսների ներգրավումը ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից, ինչպես նաև ՄԱՎԵՏԱ ծրագրի շրջանակներում իրականացվող մեթոդական և մասնագիտական վերապատրաստումներում: Սակայն, ելնելով ուսանողների և դասախոսների շրջանում վերհանված կարիքներից, փորձագիտական խումբը անհրաժեշտություն է տեսնում ուսուցման ժամանակակից ինտերակտիվ մեթոդների տիրապետմանը և թվային գրագիտությանը նպաստող վերապատրաստումների կազմակերպմանը, ինչը կբարձրացնի ուսանողների մոտիվացիան և դասի ընթացքում ուսումնական նյութի յուրացման արդյունավետությունը: Փորձագիտական խումբը գնահատում է կադրային ռեզերվի առկայությունը քոլեջում՝ միաժամանակ մտահոգություն տեսնելով կադրային հոսունության մեջ:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջը կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի դասախոսական կազմի ընտրության քաղաքականություն, յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, որոշ չափով կայուն դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, նախորդ հավատարմագրումից հետո որդեգրել է դասավանդողների երիտասարդացման, ռեզերվային կադրերի տվյալների հավաքագրման քաղաքականություն, ինչպես նաև նախորդ հավատարմագրումից հետո իրականացրել է գյուղատնտեսական ոլորտի մասնագիտությունների դասախոսների կատարելագործմանն ուղղված աշխատանքներ, ներդրել է դասախոսների գնահատման մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 5-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

## VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:**

**Փաստեր**: ՄՈՒՀ-ի ռազմավարական նպատակներից է հետազոտական և նորարարական գործունեության արդյունավետության բարձրացումը: Հետազոտական աշխատանքների իրականացումը դիտարկվում է ՄՈՒՀ-ի ռազմավարական խնդիրներից, ՄՈՒՀ-ը կարևորում է

հետազոտական գործունեության և ուսումնառության կապի ապահովումը: Այս խնդրի լուծման համար սահմանված են որոշակի քայլեր, որոնցից են .

1. առաջիկա 5 տարիների համար քոլեջում իրականացվելիք հետազոտությունների ուղղությունների և այդ ոլորտներում իր հետաքրքրությունների մշակում և պլանավորում,
2. հետազոտության ոլորտում քոլեջի ռազմավարության հիման վրա միջնաժամկետ և կարճաժամկետ կոնկրետ ծրագրերի մշակում,
3. հետազոտությունների իրականացման բարենպաստ պայմաններ ստեղծելու համար հստակ մեխանիզմների մշակում,
4. նյութատեխնիկական բազայի ապահովում՝ ելնելով աշխատանքների առաջնահերթությունից:

Անհրաժեշտ է նշել, որ վերը նշվածը միշտ չէ, որ տեղ է գտնում ստորաբաժանումների աշխատանքային պլաններում:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ՄՈՒՀ-ը հետազոտական աշխատանքը փորձել է ներդնել երկու ԱՀՈՒ կրթական ծրագրերում («Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» և «Անասնաբուժություն») և դարձնել մասնագիտական մոդուլների բաղկացուցիչ մաս: Նշված երկու ծրագրերում ներդրվել են դիպլոմային աշխատանքները: Վերջինիս իրականացման նպատակով մշակվել և ներդրվել են դիպլոմային աշխատանքների կատարման ուղեցույց, ըստ որի սահմանվել է դիպլոմային աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը: Կառուցվածքային բաղադրիչներից են «Իրականացված աշխատանքների վերլուծություն» և «Եզրակացություն՝ ձեռք բերված փորձառության վերլուծություն» բաժինները, որոնց կատարման համար կարևոր նշանակություն է տրվել վերլուծական բաղադրիչին: Ըստ ուղեցույցի՝ «Իրականացված աշխատանքների վերլուծություն» բաժնում ներկայացվում են ըստ մասնագիտական բնագավառների իրականացված աշխատանքները. դրանց մեթոդաբանությունը, օգտագործված գործիքակազմը և ձեռք բերված արդյունքները: Վեր են հանվում աշխատանքի իրականացման ընթացքում հանդիպած խնդիրները և տրվում են դրանց տեսական կամ կիրառական լուծումները, ներկայացվում են դիպլոմային աշխատանքի թեմայի հիմնախնդրին և ստացված արդյունքների հիման վրա կազմակերպության գործընթացների ու աշխատանքների բարելավման առաջարկություններ: «Եզրակացություն՝ ձեռք բերված փորձառության վերլուծություն» բաժնում ներկայացվում են ԱՀՈՒ-ի շնորհիվ ձեռք բերված անձնական և մասնագիտական փորձառությունն ու կարողությունները, աշխատավայրում հանդիպած դժվարությունները, առաջարկություններ թեմայի և մասնագիտական գործունեության բնագավառների տարբեր կողմերի վերաբերյալ:

Փորձագիտական այցի և դիպլոմային աշխատանքների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ իրականացված աշխատանքները վերլուծական են և ուսանողներին հնարավորություն են ընձեռում իրացնելու իրենց մասնագիտական գիտելիքները և հանդես գալ առաջարկություններով, արտադրության արդյունավետության բարձրացման նպատակով, օրինակ՝ հումքը ռացիոնալ օգտագործել՝ ավելացնելով հումքային պաշարները: Որպես լուծում առաջարկվել է հումքի անթափոն վերամշակումը՝ առաջարկելով օգտագործել կաթնամթերքների արտադրությունից ստացված երկրորդային հումքը՝ թանը, շիճուկը այլ մթերքների արտադրությունում և

այլն: Այսպիսի օրինակները շատ են: Բացի այդ, պարզվեց, որ «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտության ուսանողները տան պայմաններում պատրաստում են կաթնամթերք և ներկայացնում դասախոսին, իսկ «Անասնաբուժություն» մասնագիտության ուսանողները իրականացնում են հետազոտական աշխատանքներ սեփական տնտեսություններում և արդյունքներով կիսվում են դասախոսների հետ: Սակայն կատարված հետազոտությունների արդյունքները վավերացված չեն որևէ կերպ /ռեֆերատ, զեկույց, տեսահոլովակ և այլն/:

Անհրաժեշտ է նշել, որ հետազոտական բաղադրիչ պարունակող նման աշխատանքները ներդրված են միայն այդ երկու ՄԿԾ-ներում: Մնացած ծրագրերում առկա են միայն ռեֆերատիվ աշխատանքներ, որտեղ ինքնուրույն աշխատանքի բաղադրիչը բացակայում է, առկա չեն եզրակացություններ և օգտագործված աղբյուրների հիշատակումներ:

Փաստաթղթերի /ինստիտուցիոնալ վերլուծություն, հաշվետվություն/ ուսումնասիրությունից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջում ստեղծվել է ուսանողական հետազոտական ընկերություն, որը կամավոր օգնում է մեղվաբուծության հետ կապված աշխատանքներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ընկերությունը դեռևս հետազոտական գործունեություն լիարժեքորեն չի ծավալում, տվյալների հավաքագրում և վավերացում տեղի չի ունենում, որը հիմք կհանդիսանար վերլուծությունների և ոլորտի զարգացման համար:

Ինչ վերաբերում է դասախոսական կազմի հետազոտական աշխատանքներին, ապա փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ դասախոսներն իրենց մասնագիտական գործունեության արդյունքում հիմնականում չունեն մշակված ձեռնարկներ, մեթոդական ուղեցույցներ: Դասախոսական կազմը նաև հետամուտ չէ մասնագիտական ոլորտում ուսումնասիրելու միջազգային փորձը: Բացառություն են կազմում միայն միջազգային ծրագրերում ներգրավված երկու ԱՀՈՒ ՄԿԾ-ների դասախոսները: «ՄԱՎԵՏԱ» ծրագրի շրջանակներում համատեղ մշակվել է մեկ ուսումնական ձեռնարկ «Անասնաբուժություն» մասնագիտության «Կրտսեր անասնաբույժ» որակավորման համար, որի շնորհանդեսը կատարվել է 2019 թվականին: Եղած լավ փորձը չի տարածվում նաև այլ մասնագիտություններում:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մյուս կրթական ծրագրերում ցածր է նաև հետազոտական աշխատանքներ իրականացնելու ուսանողների իրազեկվածությունը, իսկ դասախոսների մոտ՝ դրանով զբաղվելու մոտիվացիան: Այս տեսանկյունից հարկ է նշել, որ քոլեջում առկա չեն դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Իսկ ինչ վերաբերում է ՄՈՒՀ-ում իրականացվող հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներին, անհրաժեշտ է նշել, որ մշակված սակավաթիվ ձեռնարկները ներդվում են ուսումնական գործընթացում:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի հիմնարար փաստաթղթերում /ՌԾ/ հետազոտության իրականացումը դիտարկվում է առաջնահերթություն, այնուամենայնիվ ՄՈՒՀ-ի անձնակազմի կողմից այդ խնդիրների իրագործման համար սահմանված չեն հստակ և նպատակային պլաններ:

Փորձագիտական խումբը դրական է համարում «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», «Անասնաբուժություն» կրթական ծրագրերի շրջանակներում դիպլոմային աշխատանքներ ներդնելու ՄՈՒՀ-ի նախաձեռնողականությունը: Գովելի է, որ դիպլոմային աշխատանքների թեմաների ընտրությունը իրականացվում է հաշվի առնելով ԱՀՈՒ իրականացնող կազմակերպությունների ռեսուրսային հնարավորությունները և ուսանողների կողմից իրականացրած աշխատանքների բնույթը, որը հնարավորություն է ընձեռում իրականացնել կիրառական և աշխատանքի վրա հիմնված հետազոտություններ: Ինչպես նաև գովելի է, որ դիպլոմային աշխատանքների իրականացման նպատակով մշակվել և ներդրվել է ուղեցույց և դիպլոմային աշխատանքների կատարման համար ուղեցույցով սահմանված է վերլուծական բաղադրիչի մեծ ծավալ և դրա իրականացումը հիմնված է ինչպես քոլեջում ձեռք բերված գիտելիքների, այնպես էլ ԱՀՈՒ-ի շնորհիվ ձեռք բերած մասնագիտական փորձառության վրա: Եղած լավ փորձը կարելի է տարածել նաև այլ ՄԿԾ-ներում:

Դրական է, որ ՄՈՒՀ-ում ձևավորվել է ուսանողական հետազոտական ընկերություն, որը զբաղվում է մեղվաբուծությամբ և վերջիններիս հետազոտմամբ, այնուամենայնիվ մեղուների ուսումնասիրության ընթացքում ստացված տվյալները անհրաժեշտ է ամրագրել, վավերացնել, հետագայում նաև վերլուծել և համեմատել ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների միջոցով, վերջինս կհանգեցնի նաև ուսանողների հետազոտական կարողությունների զարգացմանը և նոր գիտելիքի ստեղծմանը: Հետազոտությունների զարգացմանն ու նորարարություններին նպաստող քաղաքականության և ընթացակարգի բացակայության հետևանքով քոլեջում բավարար մակարդակով չեն իրականացվում վերը նշված գործընթացները:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում, որ ԱՀՈՒ բաղադրիչ չպարունակող կրթական ծրագրերի շրջանակներում ուսումնառողների կողմից հետազոտական, վերլուծական և ինքնուրույն աշխատանքները սակավաթիվ են, որը կարող է վտանգել՝ ուսանողների մասնագիտական խնդիրները բացահայտելու և վերջիններիս լուծումներ գտնելու ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի ամբողջական ձևավորմանը:

Փորձագիտական խումբը մտահոգիչ է համարում դասախոսական կազմի կողմից իրականացվող ուսումնա-մեթոդական աշխատանքների իրականացման պասիվությունը, մասնագիտական ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրության մոտիվացիայի պակասը: Նման մոտեցումը կարող է հանգեցնել նրան, որ ուսանողները չծանոթանան ոլորտի առաջադեմ գաղափարներին, չստանան ժամանակակից և կիրառելի գիտելիքներ և կարողություններ, որն էլ կարող է սահմանափակել հետագայում ուսանողների մրցունակությունը աշխատաշուկայում: Միևնույն ժամանակ քոլեջը հանդիսանում է տարածաշրջանում գյուղատնտեսական ոլորտի զարգացմանը նպաստող ուսումնական կենտրոն, վերջինս իրենից ենթադրում է, որ դասախոսական կազմը պետք է կարողանա տրամադրել ժամանակակից տեղեկատվություն այդ ոլորտում բարեփոխումներ իրականացնելու ուղղությամբ:

**Եզրահանգում:** Հաշվի առնելով, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջի ոչ բոլոր կրթական ծրագրերում է ներդրված հետազոտական և վելուծական բաղադրիչը, առկա չէ դասախոսական կազմի հետազոտական գործունեության խթանման քաղաքականություն և ընթացակարգեր, դասախոսական կազմի սակավ հատվածն է

զբաղվում հետազոտական աշխատանքներով և մասնագիտական ոլորտում միջազգային փորձի և նորարությունների ուսումնասիրությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը չի բավարարում չափանիշ 6-ի- պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

## VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:**

**Փաստեր**: Քոլեջի 2020-2025թթ. ռազմավարական խնդիրներից է մասնագիտությունների կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ուսումնական և աշխատանքային միջավայրի բարելավումը, ուսումնական, կրթական և մյուս ռազմավարական ուղղություններով արդյունավետ գործունեության իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ապահովումը, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններին բարելավումը:

Գյուղատնտեսական քոլեջը զբաղեցնում է ընդհանուր 4,672 հա մակերես տարածք: Վերջինս ունի ուսումնական, վարչական, մասնաշենքեր, վթարային վիճակում գտնվող սպորտդահլիճ, ավտոտնակ և կաթսայատուն, բուժկետ, փայտաշեն կառույց: Ուսումնական, վարչական մասնաշենքերում և փայտաշեն կառույցում տեղակայված են 18 լսարաններ: Վարչական և ուսումնական մասնաշենքերում առկա են նաև պանրագործության, անասնաբուժության, անասնաբուծության, փոխադրումների կազմակերպման և կառավարման լաբորատորիաները: Անասնաբուծության և անասնաբուժության լաբորատորաներում առկա են հին մուլյաժներ և դիդակտիկ նյութեր: Պանրագործության լաբորատորիան կահավորված է անհրաժեշտ սարքավորումներով, որոնց մշտական կիրառելիությունը գրեթե անհնար է՝ կապված նյութաձեռքբերման և սարքավորումների տարողունակության հետ (կաթի կաթսայի տարողությունը 400լ է): Ինչպես նաև լաբորատորիան բարվոք վիճակում չէ սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման տեսանկյունից (վերանորոգում, հատակի սալիկապատում): Համակարգչային լսարանը հագեցած է 10-12 համակարգչով, որոնց մի մասը տեխնիկական վերազինման և ծրագրային (օրինակ՝ ՀԾ Հաշվապահական հաշվառում կրթական ծրագրի համար) համալրման կարիք ունի: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ գործատուները հիմանականում գոհ են ուսանողներից, թեև նշում են, որ կա ուսանողների թվային գիտելիքների և կարողությունների բարելավման անհրաժեշտություն:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի նաև քիմիայի, ֆիզիկայի լաբորատորիաներ: Ֆիզիկայի լաբորատորիային GIZ-ի կողմից տրամադրվել է 4 աշխատանքային ճամպրուկ, որոնք պարունակում են լաբորատոր գործիքներ: Նախնական զինվորական պատրաստության կաբինետում համապատասխան գույքի բացակայությունը լրացնելու նպատակով քոլեջը համագործակցում է զինվորական մասի հետ:

ՄՈՒՀ-ն ունի 20 անձի համար նախատեսված ընթերցասրահ, որն օրվա առաջին հատվածում ծառայում է որպես լսարան: 2022թ. տվյալներով քոլեջն ունի 8305 միավոր գրականություն, այդ թվում՝ դասագրքեր, գրքեր, մասնագիտական գրականություն: Մասնագիտական գրականությունը կազմում է 5147 միավոր: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ գրադարանում առկա գրականությունը հիմնականում հայերենով է: Առկա է նաև ռուսալեզու և անգլալեզու գրականություն: Բաժանորդագրված է 45 դասախոս և 180 ուսանող: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները գրադարանից առավել ակտիվ օգտվում են առաջին կուրսում՝ դասագրքերի հետ կապված, ավելի բարձր կուրսերում նրանք սահմանափակվում են դասախոսի տված ուսումնառության նյութերով: Քոլեջի ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն նաև օգտվել Հայաստանի ազգային ագրարային համալսարանի էլեկտրոնային գրադարանից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ օգտվողների թիվը մեծ չէ:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա քոլեջը գործնական պարապմունքների, պրակտիկաների իրականացման համար օգտագործում է նաև գործընկեր կազմակերպությունների ռեսուրսները, մասնավորապես ԱՀՈւ-ի շրջանակներում:

Քոլեջն ունի 2 շարժական պրոյեկտոր: 2023-2024 թթ. ՄՈՒՀ-ը ձեռք է բերել 10 նոր համակարգիչ ՄԱՎԵՏԱ ծրագրի շրջանակներում, 4-ն էլ՝ Էրազմուս+-ի շրջանակներում: 1 համակարգիչ 2022թ. նվիրաբերվել է ԿԳՄՄՆ-ի կողմից: Քոլեջն ունի տրակտոր, որը շահագործվում է «Տրակտորիստ-մեքենավար» կարճաժամկետ դասընթացի ժամանակ:

Փորձագիտական այցից և ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջը չի իրականացրել լսարանային ֆոնդի վերանորոգումներ, քանի որ պետական ծրագրի շրջանակներում նախատեսվում է քոլեջի նոր շենքի կառուցում և շահագործում: Կատարվել են միայն ընթացիկ բարեկարգման աշխատանքներ:

Քոլեջը 2024 թվականին ՌԶԳ ՀԿ-ի կողմից որպես նվիրատվություն ստացել է փոխադրամիջոց, որը ծառայելու է ուսանողների գործնական պարապմունքների կազմակերպմանը գործատու կազմակերպություններում:

2022 թ. -ին «Բիզնես և կրթություն» հիմնադրամի անմիջական օժանդակությամբ «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» հիմնադրամի ֆինանսավորմամբ «Մեղվաբուծության դարբնոց» գիտակրթական կենտրոն ՓԲԸ-ի կողմից քոլեջում իրականացվել է «Մեղվաբուծություն» ծրագիր և նվիրաբերվել է 10 մեղվաընտանիք՝ համապատասխան գույքով:

Էրազմուս+ ծրագրի շրջանակներում քոլեջը նախատեսում է հիմնել 25 գլխից բաղկացած SMART ֆերմա, որը կներառի գյուղատնտեսական ողջ ցիկլը: «Հայկական Կարիտաս» ՀԿ-ի հետ համագործակցության շրջանակներում քոլեջը դրամաշնորհային ծրագրի հնարավորություն կունենա, որը թույլ կտա հիմնել 150 քմ ջերմոց:

2018 թ. -ից քոլեջում գործում է ֆինանսական միջոցների գոյացման և բաշխման քաղաքականություն և ընթացակարգ, որը կարգավորում է ֆինանսական մուտքերի

բազմազանությանը միտված գործընթացները: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ պետբյուջեից հատկացումները դեռ կազմում են մուտքերի գլխավոր մասը:

Քոլեջի եկամուտների և ծախսերի տվյալների համաձայն՝ 2023թ. կտրվածքով ընդհանուր ծախսերի 84,49%-ը բաժին է ընկնում աշխատավարձի ֆոնդին: 10,42%-ը հատկացվում է կրթաթոշակներին, 0,77%-ը պրակտիկաների կազմակերպմանը, 0,33%-ը գործուղման ծախսերն են, 0.37 %-ը ծառայությունների ձեռքբերման ծախսերն են, 0,01 %-ը՝ վճարումներն են պետբյուջե, 3,61%-ն էլ տնտեսական ծախսերն են, որոնց մեծ մասը բաժին է ընկնում կոմունալ վճարների կատարմանը: Ըստ 2020-2025 թթ. ՄՈՒՀ-ի առաքելության հիմնական ուղղությունների բյուջեի բաշխման տվյալների՝ դրամական հատկացումներ չեն իրականացվել ուսումնական սարքավորումների և գույքի ձեռքբերմանը, որակի ապահովման գործընթացների, դասավանդողների մասնագիտական զարգացմանը, հետազոտական գործունեությանը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դրամաշնորհային ծրագրերի մասնակցության, ֆինանսավորման այլ մոդելների կիրառման դեպքեր քոլեջում առկա չեն*:*

2023թ. քոլեջի բյուջեի եկամուտների 93,9 %-ը կազմում են պետական ֆինանսավորումից մուտքերը, ուսանողների վարձավճարներից մուտքերը կազմում են 6,1%: 2020-2022 թթ. բյուջեի մուտքերը ավելացել են պետական բյուջեի ֆինանսավորման և արտաբյուջեի միջոցների հաշվին: Որպես լրացուցիչ ֆինանսավորման աղբյուր՝ քոլեջն իրականացնում է «Տրակտորիստ-մեքենավարի» կարճաժամկետ դասընթաց, որից ներգրաված մուտքերը քիչ տեսակարար կշիռ ունեն քոլեջի բյուջեի եկամուտների կառուցվածքում՝ մոտավորապես 2%: Քոլեջն արտաքին շահակիցների հետ հաղորդակցումն ապահովում է Mulberry համակարգով: Ներքին փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է ինչպես թղթային եղանակով, այնպես էլ՝ էլեկտրոնային փոստի կիրառմամբ: Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միասնական համակարգ քոլեջում ներդրված չէ:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի կենտրոնական ջեռուցման համակարգ, հակահրդեհային համակարգ, կրակմարիչներ, պահակակետ, տեղադրված են տեսանկարահանող սարաքավորումներ, բոլոր հարկերում առկա են տարհանման պլաններ: Քոլեջն ունի բուժկետ, ուսանողներն ու դասախոսները ընդհանուր առմամբ գոհ են գրադարանավարի, բուժքրոջ և պահակի մատուցած ծառայություններից (80% բավարարվածություն): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը չունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողներ: Թեքահարթակներ քոլեջում առկա չեն: Քոլեջն իրականացրել է բակի բարեկարգման աշխատանքներ, առկա է հանգստյան գոտի:

2022-2023 ուստարում քոլեջն իրականացրել է ռեսուրսներից բավարարվածության հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում: Ուսանողների գրեթե 43, իսկ դասախոսների 37%-ն է միայն բավարարված շենքային, լսարանային պայմաններով: Քոլեջում մարզադահլիճ առկա չէ: Քոլեջում ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ չեն կիռարվում, ռեսուրսներով բավարարվածության հարցաշարերում բացակայում են նման հարցադրումները:

**Դատողություններ:** Դրական է, որ ՄՈՒՀ-ը կրթական գործընթացների իրականացման համար ունի որոշակի միջավայր, այնուամենայնիվ նյութական ռեսուրսների և սարքավորումների պակասը

որոշակիորեն խոչընդոտում են կրթական ծրագրերով սահմանված որոշ գործնական կարողությունների ձևավորանը: Գովելի է, որ նախորդ հավատարմագրումից հետո քոլեջը նախաձեռնողականություն է դրսևորել գործատուների և միջազգային գործընկերների հետ համագործակցության, որը որոշակիորեն նպաստում է մասնագիտական գործնական կարողությունների ձեռքբերմանը՝ նամանավանդ գյուղատնտեսական մասնագիտությունների ուղղությամբ (ԱՀՈ, հաջորդիվ նաև դուալ կրթություն իրականացնելու շնորհիվ):

Իսկ ինչ վերաբերում է նյութական ռեսուրսների բարելավմանը, ապա այս պահին ՄՈՒՀ-ն այդ ուղղությամբ ունի որոշակի կաշկանդվածություն՝ կապված պետական միջոցներով նոր շենքի կառուցման հետ: Փորձագիտական խումբն այս առումով գտնում է, որ ՄՈՒՀ-ն անհրաժեշտություն կունենա որոշակի ծախսեր իրականացնել այս ուղղությամբ ուսանողների համար մինիմալ պայմաններ ապահովելու համար՝ հաշվի առնելով որ նոր շենքի կառուցումը երկար ժամանակ կարող է պահանջել, սակայն այդ ընթացքում ՄՈՒՀ-ը շարունակում է իրականացնել կրթություն և թողարկել պահանջված շրջանավարտներ:

Թեև գրադարանում առկա են բազմաթիվ հին գրքեր, այնուամենայնիվ փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի գրադարանի պարբերական թարմացումը ժամանակակից մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ:

Փորձագիտական խումբը դրական է համարում արտաբյուջեից մուտքերի ավելացումը, որը պայմանավորված է ուսանողների թվի աճով, ինչպես նաև ուսման վարձերի բարձրացմամբ: Փորձագիտական խումբը հնարավորություն է տեսնում արտաբյուջետային մուտքերի մեծացման՝ ձեռնարկատիրական հնարավորությունների օգտագործման հաշվին:

Կարևոր է նաև ֆինանսական միջոցների գոյացման, բաշխման քաղաքականության առկայությունը, սակայն այն ամբողջովին չի գործում ուսումնական բազայի համալրման և արտադրական բազայի ստեղծման, կարճաժամկետ դասընթացների ակտիվ կազմակերպման տեսանկյունից:

Փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինասաները ՌԾ նպատակներին համապատասխանեցնելը և ՌԾ-ով նախատեսված հստակ ֆինանսական բաշխում ունենալը կարող է նպաստել քոլեջի ֆինանսական պլանավորման և ՌԾ իրականացման արդյունավետությանը:

Դրական է, որ քոլեջի ՈԱՊ-ի կողմից իրականացվում են ռեսուրսներից բավարարվածության հարցումներ: Այդ հարցումների արդյունքում պարզ է դառնում, որ քոլեջը նոր, ավելի անվտանգ շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի համալրման կարիք ունի: Սակայն հարցարանները չեն պարունակում ռեսուրսների հասանելիությունն ու կիրառելիությունը բացահայտող հարցեր, ինչը հնարավորություն կտա բացահայտել առկա ռեսուրսների արդիականությունը, հասանելիության հնարավորությունը ներքին շահակիցներին:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջը նախորդ հավատարմագրման գործընթացից հետո մեծ արդյունքներ չի գրանցել ռեսուրսային բազայի թարմացման ուղղությամբ, չեն կատարվել մասնագիտական ուսուցումն ապահովելու համար էական ռեսուրսային համալրումներ, վերանորոգման աշխատանքներ, որոնք խոչընդոտում են ուսանողների գործնական կարողությունների

ձեռքբերմանը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում չափանիշ 7-ի պահանջները:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

## VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:**

**Փաստեր**: Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում գործում է հաշվետվողականության ներքնից վերև համակարգ: Նախորդ հավատարմագրումից հետո քոլեջում մշակվել է Քոլեջի կառուցվածքային սխեման, որի համաձայն ներդրվել է հաշվետվողականության կարգ: Քոլեջի ստորաբաժանումները կիսամյակային և տարեկան կտրվածքով ներկայացնում են իրենց գործունեության հաշվետվությունը ՄՈՒՀ-ի կազմակերպական կառուցվածքով նախատեսված իրենց ղեկավարին:

Նախորդ հավատարմագրման արդյունքում ուսումնական հաստատությանը տրամադրվել է խորհրդատվություն հաշվետվություններն առավել վերլուծական դարձնելու ուղղությամբ: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ որոշ ստորաբաժանումների հաշվետվություններում ներառվել է վերլուծական բաղադրիչ, օրինակ՝ դուալ կրթական ծրագրերի ղեկավարի, որոշակիորեն նաև հանրակրթական առարկաների բաժնի վարիչի, պրակտիկայի պատասխանատուի, կազմակերպչադաստիրակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի և գրադարանավարի: Մնացյալ ստորաբաժանումների հաշվետվությունները դեռևս շարունակում են ունենալ նկարագրական բնույթ: Անհրաժեշտ է նաև նշել, որ քոլեջը բոլոր ստորաբաժանումների հաշվետվություններում ներդրել է SWOT վերլուծությունների իրականացումը: Ստորաբաժանումները վերլուծում են իրենց գործունեության ուժեղ և թույլ կողմերը, սակայն չեն ներկայացվում առաջարկություններ թույլ կողմերի լավարկման ուղղությամբ: Հաշվետվությունները չեն ներկայացվում ըստ ռազմավարական առաջնահերթությունների: Տնօրենը գրավոր հաշվետվություն է ներկայացնում ԿԽ-ին միայն ֆինանսական տեսանկյունից, մնացյալ հարցերը քննարկվում են բանավոր մակարդակով:

Իսկ ինչ վերաբերում է արտաքին հաշվետվողականությանը, ապա քոլեջը հաշվետու է լիազոր մարմնին, վիճակագրական վարչությանը, Պետական եկամուտների կոմիտեին, ՈԱԱԿ-ին (թերությունների վերացման ծրագրի իրականացման տեսանկյունից):

Քոլեջն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը պաշտոնական հայալեզու կայքէջի միջոցով: Կայքէջում առկա է տեղեկ գործող ստորաբաժանումների գործառույթների, ամբիոնների (դասախոսական

կազմը, մասնագիտությունները, ռեսուրսները, գործունեությունը, դասավանդվող առարկաները, դասախոսական կազմի վերապատրաստումները), քոլեջի առօրյայի և այլնի մասին:

Այնուամենայնիվ, կայքէջում հանդիպում է ոչ թարմացված տեղեկատվություն մասնագիտությունների (մասնավորապես վերջին տարիներին ներդրված) վերաբերյալ, ներկայացված չեն որոշ կարևոր տվյալներ, ինչպիսիք են՝ իրականացվող կրթական ռեֆորմները, շրջանավարտների զբաղվածության մակարդակը, միջազգային համագործակցությունը և այլն:

Սակայն փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ քոլեջի կայքէջը ունի փոքր ծավալ և բացակայում է այն ընդլայնելու հնարավորությունը:

Հասարակության հետ հետադարձ կապ պահպանելու մեխանիզմներից են դիտարկվում քոլեջի ֆեյսբուքյան էջը և կայքէջը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի կայքէջի հաղորդագրության հարթակներով իրականացվում է հարցում արտաքին շահակիցների շրջանում: Մարզի բնակիչները մասնակցում են հարցումների և ներկայացնում իրենց բավարարվածությունը քոլեջից, ներկայացնում իրենց կողմից պահանջարկված մասնագիտությունները և այլն: Այս հարցման վերլուծության և մարզի զարգացման ծրագրի ուսումնասիրության արդյունքում ՄՈՒՀ-ը ներդրել է «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ն:

Գործատուներից հետադարձ կապ ստանալու նպատակով ՄՈՒՀ-ն իրականացնում է հարցումներ պրակտիկայի արդյունավետության, և վերջիններիս գոհունակությունը ուսանողների մասնագիտական գիտելիքներից գնահատելու նպատակով:

Ինչ վերաբերում է հասարակությանը արժեքներ և գիտելիքներ փոխանցելուն, ապա փորձագիտական այցի և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են որոշ միջոցառումներ: Մասնավորապես՝

- կարիերայի կենտրոնի նախաձեռնությամբ դպրոցի աշակերտները հնարավություն են ունեցել լինել քոլեջում և քիմիայի լաբորատորիայում ուսումնասիրել կաթի քիմիական կազմը, ինչպես նաև աշակերտների համար կազմակերպվել է այց «Լոռվա-կաթ» ՍՊԸ:
- ՄՈՒՀ-ը կազմակերպում է կարճաժամկետ դասընթաց «Տրակտորիստ-մեքենավար» պատրաստելու նպատակով:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է դիտարկում քոլեջի կառուցվածքային սխեմայի հստակեցումը և հստակ հաշվետվողականության համակարգի ներդրումը: Առկա է որոշակի դրական տեղաշարժ հաշվետվություններում վերլուծությունների իրականացման ուղղությամբ, որը նպաստել է առավել հիմնավորված որոշումների կայացմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ստորաբաժանումների լավ փորձառությունն այս ուղղությամբ անհրաժեշտ է վերլուծել և տարածել մյուս ստորաբաժանումներում:

Փորձագիտական խումբը գտնում է, որ բոլոր ստորաբաժանումների կատարած աշխատանքների վերաբերյալ հավաքական տեղեկատվության հավաքագրման և ռազմավարական առաջնահերթությունների արդյունքների վերլուծության համար ՄՈՒՀ-ն անրհրաժեշտություն կունենա մշակելու նաև տարեկան հաշվետվություն՝ ըստ ՌԾ նպատակների: Տարեկան հաշվետվությունների ներկայացումը հիմք կհանդիսանա քոլեջի ձեռքբերումների արձանագրման, ինչպես նաև հաշվետվողականության մեծացման համար:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում հաշվետվողականություն ապահովող և հասարակության հետ հետադարձ կապ հաստատելու միջոցներ հանդիսացող ֆեյսբուքյան էջի և կայքէջի միջոցով պարբերաբար լուսաբանվում են քոլեջի հետ կապված հիմնական միջոցառումները, որը նպաստում է քոլեջի գործունեության թափանցիկության ապահովմանը: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի պաշտոնական կայքէջում ուսումնառվող նոր մասնագիտությունների նկարագրերը, ունեցած ձեռքբերումները ներկայացնելը կնպաստի այլ հարթակներում տեսանելիության ապահովումը: Դրական է, որ քոլեջն իրականացնում է որոշ կարճաժամկետ ծրագրեր, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ գյուղատնտեսական քոլեջը կարող է նշանակալից դերակատարություն ունենալ տարածաշրջանին մասնագիտական գիտելիք փոխանցելու տեսանկյունից: ՄՈՒՀ-ը կարող է տրամադրել այնպիսի տեղեկատվություն, որը կնպաստի օրինակ օրգանական գյուղատնտեսության զարգացմանը և այլն: Տեղեկատվության տարածումը կարող է տեղի ունենալ ֆեյսբուքյան էջի և կայքէջի միջոցով՝ունենալով «Գյուղատնտեսի անկյուն» բաժինը: Այսպիսի գործունեությունը կնպաստի մարզի զարգացմանը և մարզի կենսամակարդակի բարձրացմանը:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում է հաշվետվողականության ներքնից վերև համակարգ, գործում են հասարակության հետ հետադարձ կապ հաստատելու և հաշվետվողականություն ապահովող միջոցներ, ՄՈՒՀ-ի կողմից կազմակերպվում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցմանը միտված որոշ միջոցառումներ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 8-ի- պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

## IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

**ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:**

**Փաստեր:** Արտաքին կապերի ընդլայնումը դիտարկվում է Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի ՌԾ նպատակներից: Նպատակին հասնելու համար որպես խնդիր դիտարկվել է արտաքին կապերի, փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայրի ստեղծումը: ՄՈՒՀ-ը կարևորում է արտաքին կապերի կանոնակարգված գործընթացի արդյունքում տեղական և միջազգային հաստատաությունների և կառույցների հետ արդյունավետ համագործակցության ապահովումը: Այս խնդրի լուծման համար սահմանված են որոշակի քայլեր, որոնցից են.

1. բարելավել ուսումնառողների և դասավանդողների օտար լեզուների իմացությունը,

2. մշակել և ներդնել որոշ մասնագիտական կրթական ծրագրերում օտարերկրյա ուսումնառողներին առաջարկվող օտար լեզուներով դասընթացներ,
3. վերանայել և բարելավել արտաքին կապերի բաժնի գործունեությունը կարգավորող ընթացակարգերը,
4. մշակել և ներդնել արտաքին կապերի բաժնի որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր,
5. ընդլայնել համագործակցության շրջանակները համադրելի առաջատար քոլեջների հետ:

Անհրաժեշտ է նշել, որ սահմանված որոշ նպատակներ ՄՈՒՀ-ի համար այս պահի դրությամբ այդքան էլ իրատեսական չէ, օրինակ՝ 2-րդ, 3-րդ և 4-րդ նպատակները: ՄՈՒՀ-ում արտաքին կապերի բաժին առկա չէ:

Տեղական և միջազգային համագործակցությունն ընդլայնելու նպատակով 2021թ. ՄՈՒՀ-ում ձևավորվել է հասարակական հիմունքներով գործող արտաքին կապերի հանձնաժողով, որում ընդգրկված է 11 անդամ՝ կազմակերպադաստիարկչականաշխատանքների գծով տնօրենի տեղակալը, հաշվապահը, ուսումնական մաս վարիչը, կարիերայի կենտրոնի պատասխանատուն, հանրակրթական բաժնի վարիչը, օտար լեզվի դասախոսը և այլք: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Հանձնաժողովը համագործակցում է քոլեջների, գործատուների հետ: Համագործակցող քոլեջներին ընտրելիս հաշվի են առնում, որ ուսումնական հաստատություններն իրականացեն այն նույն կրթական ծրագրերը, որոնք իրենք են իրականացնում: Քոլեջը համագործակցում է Գորիսի, Գավառի գյուղատնտեսական պետական քոլեջների, Երևանի զբոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջի հետ: Կազմակերպվում են փոխադարձ այցեր և դասախոսներն ու ուսանողները կիսվում են իրենց փորձառությամբ:

Հաստատությունը տարբեր կրթական ծրագրերի շրջանակներում համագործակցում է շուրջ 25 տեղական գործընկերների հետ: ՄՈՒՀ-ն ունի գործատու գործընկերներ գրեթե բոլոր կրթական ծրագրերի շրջանակներում (բացառությամբ «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում» կրթական ծրագրի, վերջինիս պրակտիկաները կազմակերպվում են միայն քոլեջում), որոնց հետ համագործակցության շրջանակներում հաստատությունը կազմակերպում է ուսանողների գործնական աշխատանքների և պրակտիկաների անցկացումը, իսկ ԱՀՈՒ կրթության դեպքում իրականացնում է պրակտիկ ուսուցումը՝ տրամադրելով իր արտադրական կարողությունները և համապատասխան մասնագետներին: Անհրաժեշտ է նշել, որ որոշ մասնագիտությունների գծով՝ «Գյուղացիական /Ֆերմերային/ տնտեսության կազմակերպում», «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների նորոգում, շահագործում», «Զբոսաշրջություն» ՄԿԾ-ների շրջանակներում պայմանագրերը սակավաթիվ են (ընդամենը 1 պայմանագիր):

Անհրաժեշտ է փաստել, որ նախորդ հավատարմագրումից հետո ինստիտուցիոնալ մակարդակի վրա է դրվել քոլեջի և գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը, ընդլայնվել է արտաքին կապերը, միջազգային համագործակցություն է ծավալվել այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են «Ռազմավարական զարգացման գործակալություն» ՀԿ-ն, «Հայկական Կարիտաս» ՀԿ-ն, «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամը, GIZ՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերությունը և այլն: «Ռազմավարական

զարգացման գործակալություն» ՀԿ-ի ՄԱՎԵՏԱ ծրագրով ՄՈՒՀ-ը նոր ուստարվանից կներդնի փորձարարական երկու դուալ մասնագիտություն, ծրագրի շրջանակներում գործատուների հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ ուսանողները նաև վարձատրվելու են նվազագույն աշխատավարձի չափով: Ծրագրի շրջանակներում քոլեջի տնօրենը այցելել է Շվեցարիա և ուսումնասիրել Բեռնի համալսարանի փորձը ինչպես կրթական ծրագրերի կազմման, այնպես էլ ֆերմերային տնտեսությունների հետ կապված: «Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում ՄՈՒՀ-ը ձեռք է բերել 10 փեթակ, որը քոլեջը դարձրել է 13 մեղվաընտանիք: Այս ուղղությամբ ՄՈՒՀ-ը նպատակ ունի իրականացնելու բիզնես գործունեություն:

«Հայկական Կարիտաս» ՀԿ-ի հետ համագործակցության և աշխատաշուկայի կարիքների վերլուծության շնորհիվ ներդրել են երկու նոր կրթական ծրագիր՝ «Ջերմատնային տնտեսություն»: Վերջինիս շրջանակներում կառուցվելու է ՄՈՒՀ-ի տարածքում նաև ջերմոցային տնտեսություն: Բացի այդ ՄԱՎԵՏԱ ծրագրի շրջանակներում հնարավորություն է ընձեռնվել, որպեսի 2024 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամսին քոլեջի դասախոսները փորձի փոխանակման նպատակով այցելեն Ֆրանսիայի և Պորտուգալիայի համապատասխան գյուղատնտեսական քոլեջներ:

ՄՈՒՀ-ը ներգրավված է նաև «ՄԿՈՒ հաստատությանը կից SMART ֆերմայի մոդել՝ ուսանողների աշխատանքի վրա հիմնված ուսումնառության և շրջանավարտների բարձր աշխատունակության համար» (CB4WBL) նախագծում: Ներկայումս ՄՈՒՀ-ն ուսումնասիրում է ֆրանսիական փորձը դուալ կրթական համակարգի շրջանակներում կրթական ծրագրերի կազմման ուղղությամբ: Նախագծի շրջանակներում քոլեջին կից կառուցվելու է արդիական SMART ֆերմա՝ իր մեջ ներգրավելով գյուղատնտեսական ողջ ցիկլը (կենդանիների խնամք, բուժում, բազմացում, կաթի ստացում, արտադրանք և այլն), որը հնարավորություն կտա տեղում դուալ կրթական ծրագիր իրականացնել:

Իսկ ինչ վերաբերում է ներքին շահակիցների օտար լեզուների տիրապետմանը, ապա ըստ ինքնավերլուծության տվյալների՝ դասավանդողների 35%-ը, վարչական աշխատակիցների՝ 70%-ը, ուսանողների 44%-ը տիրապետում են օտար լեզուների (անգլերեն կամ ռուսերեն): Հարցումների վերլուծության արդյունքներով քոլեջի դասախոսների շրջանում գերակշռում է ռուսերենի լավ իմացությունը, իսկ անգլերենի իմացությունը՝ ոչ բավարար է: Անհրաժեշտ է փաստել, որ ՄՈՒՀ-ը քայլեր է ձեռնարկում դասախոսական և վարչական անձնակազմի օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ՝ կազմակերպելով դասընթացներ անգլերեն և ռուսերեն լեզուներով: Դասընթացները վարում են քոլեջի համապատասխան դասախոսները, պարապմունքները իրականացվում են անվճար հիմունքներով: Օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման և զարգացման գործում ՄՈՒՀ-ը կարևորում է նաև դասախոսական կազմի ինքնակրթությունը: ՈՒսանողների օտար լեզվի իմացության մակարդակը բարձրացնելու մեխանիզմներից է քոլեջի համագործակցությունը հայ-ֆրանսիական մշակութային կենտրոնի Ստեփանավանի մասնաճյուղի հետ, որի կողմից իրականացվում է ֆրանսերեն լեզվի ուսուցման դասընթացներ, որոնց անվճար մասնակցում են նաև քոլեջի ուսանողները: Անհրաժեշտ է նշել, որ կազմակերպված վերապատրաստումների արդյունավետությունը ՄՈՒՀ-ի կողմից չի գնահատվել:

**Դատողություններ:** Դրական է, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի համար արտաքին կապերի ընդլայնումը և զարգացումը դիտարկվում է ՄՈՒՀ-ի առաջնահերթություններից, այումենայնիվ երբեմն ոչ իրատեսական խնդիրներ սահմանումը, ունեցած ռեսուրսները և հնարավորությունները հաշվի չառնելը կարող է հանգեցնել վերջիններիս ոչ լիարժեք իրականացմանը:

Գնահատելի է, որ նախորդ հավատարմագրման գործընթացից հետո տեսանելիորեն մեծացել է գործընկերների շրջանակը տեղական և միջազգային հաստատատությունների հետ, ինչը նպաստել է ինչպես նյութական ռեսուրսների ներգրավմանը, այնպես էլ նոր կրթական ծրագրերի ներդրմանը և գործող ծրագրերի լավարկմանը: Փորձագիտաան խումբը կարևոր է համարում մասնագիտական կրթական ծրագրերի շրջանակներում գործատու-գործընկերների հետ համագործակցության շարունակական ընդլայնումը, որը նպաստում է ուսանողների գործնական կարողությունների ձևավորմանը և ՄՈՒՀ-ի ունեցած ռեսուրսային բազայի սակավության լրացմանը:

Չնայած նրան, որ ՄՈՒՀ-ում առկա է օտար լեզվի իմացության ոչ բարձր մակարդակ (նամանավանդ անգլերենի), այնուամենայնիվ փորձագիտական խումբը դրականորեն է արձագանքում քոլեջի քայլերին՝ ուղղված ներքին վերապատրաստումների շնորհիվ ցուցանիշների բարելավման ուղղությամբ: Փորձագիտական խումբը գտնում է, որ առավել մեծ արդյունքներ գրանցելու համար կարևոր է սահմանել որոշակի ցուցիչներ, օրինակ՝ որոշակի ժամանակահատվածի համար անգլերենի իմացության մեկ մակարդակի բարելավում: Քոլեջի անձնակազմին այս հարցում խթանելու նպատակով հավելավճարների կամ խրախուսումների հիմքում կարող է դրվել նաև այս ցուցանշը:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը նախորդ հավատարմագրման գործընթացից հետո քոլեջում զգալիի աշխատանքներ են տարվել արտաքին կապերի հանձնաժողովի ստեղծման, գործատուների հետ համագործակցություն ընդլայնման, միջազգային ծրագրերում ընդգրկման, այլ երկրների լավագույն փորձի տեղայնացման, ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի-պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

## X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

**ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:**

**Փաստեր:** Քոլեջի ռազմավարական նպատակն է որակի ապահովման ներքին համակարգի գործունեության արդյունավետության ապահովումը, ՈԱ գործընթացների իրագործման համար մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը, ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության ընդլայնումը, ՈԱ ներքին համակարգի պարբերաբար վերանայումը, արտաքին գնահատման համար բավարար հիմքերի ստեղծումը: ՈԱ համակարգի առաքելությունն է նպաստել կրթություն և հանրային ծառայությունների վստահության ամրապնդմանը և հավաստել, որ քոլեջի շնորհած որակավորման աստիճանների որակն ու գործող չափորոշիչները պահպանվում, շարունակաբար բարելավվում և արդյունավետ կերպով կիրառվում են:

Ըստ ինքնավերլուծության՝ Քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման աշխատանքները մեկնարկել են 2017թ-ից: Որակի մշակույթի ձևավորման և գործընթացների կանոնակարգման նպատակով քոլեջը փորձել է ձևավորել համապատասխան փաստաթղթային բազա:

ՈԱ գործընթացներն իրականացվում են համաձայն ՈԱ ձեռնարկի, Որակի ապահովման կենտրոնի կանոնակարգի: Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի Որակի ապահովման կենտրոնի կողմից մշակվել է ՈԱ գործընթացներում շահակիցների ներգրավվածության քաղաքականություն, ներքին շահակիցների բավարարվածության ուսումնասիրության գնահատման ընթացակարգ, Ֆոկուս-խմբային հարցման կանոնակարգ, պրակտիկայի անցկացման և գնահատման վերաբերյալ ուսանողական հարցման կանոնակարգ: Ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ ձեռնարկը ունի ընդհանրական բնույթ, չի անդրադառնում քոլեջի կոնկրետ առանձնահատկություններին:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ որակի ապահովման պատասխանատուի համար քոլեջը հատկացրել է 1 հաստիք, ով դասավանդում է նաև ֆիզիկա առարկա: Վերջինիս համար նախատեսված է առանձին աշխատասենյակ, որտեղ աշխատասեղաններ և համապատասխան գույք է հատկացված Որակի ապահովման պատասխանատուին, Կարիերայի կենտրոնի պատասխանատուին և մեթոդիստին: Որակի ապահովման պատասխանատուն իր աշխատանքներն իրականացնում է իր պաշտոնի նկարագրի հիման վրա: Անհրաժեշտ է նշել, որ ՈԱ պատասխանատուի մասնագիտական զարգացման նպատակով ֆինանսներ չեն տրամադրվում:

Առկա է Որակի ապահովման կառուցվածքային սխեմա՝ համաձայն որի ՈԱ գործընթացներում ներգրավված են Քոլեջի խորհուրդը, սնօրենը, Որակի ապահովման կենտրոնը/ՈԱ պատասխանատու/, ուսանողական ֆոկուս խմբերը, ամբիոնները, պրակտիկայի վարիչը, մեթոդիստը, որակի ապահովման խմբերը, կարիերայի զարգացման կենտրոնը:

Որակի ապահովման պատասխանատուի տարեկան պլանի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՈԱ աշխատանքները հիմնականում կենտրոնանում են տվյալների վերհանման, քոլեջի

գործունեության և հաշվետվողականության թափանցիկության բարձրացման, SWOT վերլուծությունների իրականացման մշակույթի ներդրման, շահակիցների տեղեկացվածության և ներգրավվածության բարձրացման վրա: Ուսումնասիրությունները վկայում են, որ քոլեջը ներդրել է ստորաբաժանումների կողմից տարեկան SWOT վերլուծությունների իրականացման մշակույթ:

Որակի ապահովման պատասխանատուի նախաձեռնությամբ քոլեջն իրականացրել է տարբեր գործընթացները կանոնակարգող որոշ փաստաթղթերի վերանայում և բարելավում (Պրակտիկայի կազմակերպման և գնահատման ընթացակարգ, ներքին կարգապահական կանոններ և այլն): Պարբերաբար իրականացվում են նաև հարցումներ քոլեջի շահակիցների շրջանում՝ վերհանելու ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների կարիքները: Հարցումներ են անցկացվում նաև համայնքի բնակիչների շրջանում նոր մասնագիտությունների ներդրման մասով:

Համադրելով քոլեջի կողմից իրականացվող հարցումները որակի քաղաքականությամբ սահմանված նպատակներին՝ կարելի է նշել, որ հարցադրումները որոշակիորեն փոխկապակցված են նպատակների հետ: Հարցումների արդյունքները քննարկվում են քոլեջի ղեկավար կազմի հետ հնարավոր լուծումներ գտնելու նպատակով, սակայն այդ արդյունքները որևէ կերպ չեն հրապարակվում: Հարցաթերթերի ուսումնասիրությունից նաև պարզ դարձավ, որ վերջիններս վերջին տարիներին չեն վերանայվել: Բացի հարցումներից, իրականացվում են նաև ֆոկուս խմբային ֆորմալ և ոչ ֆորմալ հանդիպումներ: Հանդիպումների հիմնական թեմաներն են ուսանողների թվային կարողությունների ու գրագիտության զարգացումը, ժողովրդավարական մշակույթի տարածումը և այլն:

ՈԱ գործընթացների մի մասն անցել են ամբողջական ՊԻԳԲ շրջափուլը (օրինակ՝ Պրակտիկայի կազմակերպման և գնահատման ընթացակարգի վերանայում, որի ընթացքում բարելավվել են ուսանողների բացակայություններին և պրակտիկայի վերահանձնման մասին դրույթները, հաշվետվողականության մեխանիզմների վերանայում՝ վերլուծական բաղադրիչի ներդրմամբ, էթիկայի հանձնաժողովի գործունեության հստակեցում և այլն), որոշներն էլ գտնվում են շրջափուլի տարբեր փուլերում (դասավանդողների և ուսանողների՝ օտար լեզվի տիրապետման մակարդակի բարելավում, դասավանդողների մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում՝ միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ, դուալ կրթության կազմակերպում և այլն):

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈԱ պատասխանատուն հետագա պլանավորումներ ունի՝ կապված ՈԱ համակարգի բենչմարքինգի իրականացման հետ:

Անդրադառնալով քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությանը՝ որակի արտաքին գնահատման գործընթացների իրականացման համար, կարելի է նշել, որ փաստաթղթում հիմնականում ներկայացվել են անհրաժեշտ հիմքերը, վերլուծությունների արդյունքները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության գործընթացը կազմակերպվել և համակարգվել է Որակի ապահովման պատասխանատուի կողմից: Կազմված ինքնավերլուծությունը, տարածվել է շահակիցների ամբողջական շրջանակում: Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ գործատուների և ներքին շահակիցների կարիքները գրեթե ամբողջությամբ արտացոլված են ինքնավերլուծությունում, ինչպես նաև երևում է նրանց մասնակցությունը ինքնավերլուծության իրականացման աշխատանքներում:

**Դատողություններ:** Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը որակի ապահովման գործընթացներն իրականացնելու համար մշակել է համապատասխան փաստաթղթային հենք, սակայն փորձագիտական խումբը ՈԱ ձեռնարկի վերանայման և քոլեջի կարիքներին և առանձնահատկություններին հարմարեցման անհրաժեշտություն է տեսնում, ինչը կնպաստի ՈԱ գործընթացների առավել համակարգված իրականացմանը՝ կարևոր խնդիրները վերհանելու, բարելավման գործընացը պլանավորելու և իրականացնելու և գնահատման տեսանկյունից:

Որակի ապահովման պատասխանատուի կողմից իրականացվում են մի շարք հարցումներ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների, համայնքի բնակիչների և այլ շահակիցների շրջանում: Փորձագիտական խումբը գտնում է, որ նույն խնդրի վերաբերյալ բազմակողմանի ուսումնասիրությունները և համակողմանի վերլուծությունները կնպաստեն առավել օբյեկտիվ տվյալների դուրս բերմանը և որոշումների կայացման խորքային հիմնավորմանը:

Փորձագիտական խումբը կարևորում է ֆոկուս-խմբային հանդիպումների իրականացման մշակույթի ներդրումը և դրանց կազմակերպման արդյունավետությունն ապահովելու նպատակով կանոնակարգող փաստաթղթի մշակումը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ կարիք կա վերանայելու քննարկվող թեմաները՝ շեշտադրելով կրթության կազմակերպման արդյունավետությունը, շրջանավարտների զբաղվածության ծավալների մեծացման խնդիրները և այլն, վերջինս թույլ կտա խթանելու քոլեջում առկա ռազմավարական խնդիրների լուծումների հանգելու գործընթացի արդյունավետության բարձրացումը:

Թեև մինչ օրս ՈԱ համակարգի բենչմարքինգ չի իրականացվել, սակայն փորձագիտական խումբը դրական է գնահատում Որակի ապահովման պատասխանատուի դիրքորոշումը հայաստանյան այլ ՄՈՒՀ-երի հետ ՈԱ համակարգի բենչմարքինգ իրականացնելու մասով:

Փորձագիտական խումբը կարևոր է համարում SWOT վերլուծությունների իրականացման մշակույթի ներդրումը քոլեջի բոլոր ստորաբաժանումներում, այնուամենայնիվ տեսանելի չեն վերջիններիս առաջարկները հնարավորությունների կիրառմամբ թույլ կողմերի և ռիսկերի հաղթահարման մասով:

**Եզրահանգում**: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո տեփանավանի Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջում տեղի են ունեցել ՈԱ համակարգի տեսանելի բարելավումներ, առկա է ՈԱ գործընթացները համակարգող փաստաթղթային հենք, իրականացվել է որոշ փաստաթղթերի գնահատում և վերանայում, ներդրվել է ՊԻԳԲ շրջափուլը և որոշ գործընթացների մասով փակվել է ամբողջական շրջափուլը, ինչպես նաև քոլեջում ձևավորվել է որակի ապահովման մշակույթ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 10-ի պահանջներին:

**Եզրակացություն:** Փորձագիտական խումբը Ստեփանավանի Ա. Քալանթարի անվան գյուղատնտեսական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

## ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

| *ՉԱՓԱՆԻՇ* | *ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ* |
|---|---|
| 1. Առաքելություն և նպատակները | **Բավարարում է** |
| 2. Կառավարում ու վարչարարությունը | **Բավարարում է** |
| 3.Մասնագիտության կրթական ծրագրերը | **Բավարարում է** |
| 4. Ուսանողները | **Բավարարում է** |
| 5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը | **Բավարարում է** |
| 6. Հետազոտություն և զարգացումը | **Չի բավարարում** |
| 7. Ենթակառուցվածք և ռեսուրսները | **Չի բավարարում** |
| 8.Հասարակական պատասխանատվությունը | **Բավարարում է** |
| 9. Արտաքին կապեր և միջազգայնացումը | **Բավարարում է** |
| 10. Որակի ներքին ապահովման համակարգը | **Բավարարում է** |

**Քրիստինե Հակոբյան**
Փորձագիտական խմբի ղեկավար

09-ը սեպտեմբերի, 2024թ.

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

### ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

**Քրիստինե Հակոբյան՝** 2004 թվականին ավարտել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանը «Դասավանդում տարրական դասարաններում» մասնագիտությամբ: 2015 թվականին ավարտել է ԳԱԱ-ի «Տուրիզմի հիմունքներ», «Էթիկետ և միջմշակութային հաղորդակցություն», «Մարդկային ռեսուրսների կառավարում» 5-ամսյա հեռահար դասընթացները: 2011 թվականին մասնակցել է «Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում», իսկ 2020 թվականին՝ «Զբոսաշրջություն(ըստ ճյուղերի)» մասնագիտությունների պետական կրթական չափորոշիչների և մոդուլային ծրագրերի մշակման աշխատանքներին: Մի շարք մասնագիտական ձեռնարկների հեղինակ է:Հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրենների և տեղակալների վերապատրաստող է: 2005 թ.-ից առ այսօր աշխատում է «Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում՝ որպես Ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ և Տուրիզմի դասախոս:

**Աիդա Դաբաղյան՝** 2002թ. ավարտել է Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանը՝ ստանալով անգլերեն և ֆրանսերեն լեզուների ուսուցչի որակավորում: 2008-2013թթ. աշխատել է Դարակերտի միջնակարգ դպրոցում՝ որպես օտար լեզվի ուսուցչուհի: 2016-2020թթ աշխատել է Երևանի հ. 31 հիմնական դպրոցում՝ որպես ֆրանսերեն լեզվի ուսուցծուհի և «Օտար լեզուներ» մեթոդական միավորման նախագահ: 2020թ. -ից մինչ օրս աշխատում է «Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոն» հիմնադրամում՝ սկզբում որպես ֆրանսերենի դասախոս, իսկ 2021թ. մինչ օրս Կրթության որակի ապահովման պատասխանատու և Կադրային հարցերով տնօրենի օգնական: Գործունեության տարիներին մասնակցել է մի շարք միջազգային ծրագրերի:

**Ալիսա Գրիգորյան՝** 1996թ. ավարտել է Երևանի Անասնաբուծական-անասնաբուժական ինստիտուտի «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» ֆակուլտետը: 2011-2013թթ. եղել է Հայաստանի պետական (այնուհետև ազգային) ագրարային համալսարանի Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: 2016թ. մինչ օրս աշխատում է ՀԱԱՀ Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիայի ամբիոնում որպես դասախոս: 2022թ. մասնակցել է «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» պետական կրթական չափորոշչի վերանայման գործընթացին, ինչպես նաև «Յուղի, պանրի և կաթի արտադրության տեխնոլոգիա - Պանրագործ» մասնագիտության համար նախատեսված լրացուցիչ կրթական ծրագրի մշակմանը: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների, ինչպես նաև հանդիսանում է վերապատրաստող դասախոս:

**Արամ Հակոբյան՝** 2022 թվականից սովորում է Երևանի հենակետային բժշկական քոլեջի «Քույրական գործ» մասնագիտությամբ: Մասնակցել է ՈԱԱԿ «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին, որպես ուսանող փորձագետ ներգրավված է եղել նաև Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարանի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում:

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

| N. | 18.06.2024 թ. | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում տնօրենի հետ | 11:00 | 12:00 | 60 րոպե |
| 2. | Հանդիպում տնօրենի տեղակալի և ուսումնական մասի վարիչի հետ | 12:10 | 13:10 | 60 րոպե |
| 3. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 13:20 | 14:20 | 60 րոպե |
| 4. | Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի անդամների հետ | 14:30 | 15:00 | 30 րոպե |
| 5. | Ռեսուրսների դիտարկում | 15:10 | 16:10 | 60 րոպե |
| 6. | Հանդիպում Կառավարման խորհրդի անդամների հետ | 16:20 | 17:10 | 50 րոպե |
| 7. | Հանդիպում գործատուների հետ | 17:20 | 18:10 | 50 րոպե |
| 8. | Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում | 18:20 | 19:00 | 40 րոպե |

| N. | 19.06.2023 թ. | | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում ամբիոնների վարիչների, Հանրակրթական բաժնի վարիչի և դուալ կրթական ծրագրի ղեկավարի հետ | | 09:30 | 10:30 | 60 րոպե |
| 2. | Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների (10-12 ներկայացուցիչ) հետ | | 10:40 | 11:30 | 50 րոպե |
| 3. | Հանդիպում ուսանողների (10-12 ներկայացուցիչ) հետ | | 11:40 | 12:20 | 50 րոպե |
| 4. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | | 12:30 | 13:30 | 60 րոպե |
| 5. | Մասնագիտական հանդիպում «Անասնաբուժություն» և «Կաթ, կաթնամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրերի պատասխանատուների և դասախոսական կազմերի հետ | Մասնագիտական հանդիպում «Մենեջմենթ» կրթական ծրագրի պատասխանատուի և դասախոսական կազմի հետ | 13:40 | 14:40 | 60 րոպե |
| 6. | Մասնագիտական հանդիպում | Մասնագիտական հանդիպում | 14:50 | 15:50 | 60 րոպե |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | «Անասնաբուժություն» և «Կաթ, կաթնամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրերի ուսանողների հետ | «Մենեջմենթ» կրթական ծրագրի ուսանողների | | | |
| 7. | Հանդիպում շրջանավարտների հետ | | 16:00 | 17:50 | 50 րոպե |
| 8. | Փաստաթղթերի ուսումնասիրություն և փորձագիտական խմբի փակ հանդիպում | | 18:00 | 19:00 | 60 րոպե |

| N. | 20.06.2024 թ. | Մեկնարկ | Ավարտ | Տևողություն |
|---|---|---|---|---|
| 1. | Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների և այլ աշխատակիցների հետ (Հաշվապահ, պրակտիկայի ղեկավար, լաբորանտներ, գրադարանավար, Կարիերայի կենտրոնի պատասխանատու, մեթոդիստ, տնօրենի խորհրդական, կադրերի բաժնի տեսուչ, արտաքին կապերի հանձնաժողովի նախագահ) | 09:30 | 10:30 | 60 րոպե |
| 2. | Ավարտական քննության դիտարկում | 10:40 | 11:20 | 40 րոպե |
| 3. | Հանդիպում ՈւԽ ներկայացուցիչների հետ | 11:30 | 12:10 | 40 րոպե |
| 4. | Հանդիպում Կրթության որակի պատասխանատուի հետ | 12:20 | 13:10 | 50 րոպե |
| 5. | Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ | 13:20 | 14:20 | 60 րոպե |
| 6. | Բաց հանդիպում | 14:30 | 15:00 | 30 րոպե |
| 7. | Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ | 15:10 | 15:50 | 40 րոպե |
| 8. | Փորձագիտական խմբի փակ քննարկում | 16:00 | 17:50 | 100 րոպե |
| 9. | Ամփոփիչ հանդիպում ղեկավար կազմի հետ | 18:00 | 18:20 | 20 րոպե |

## ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

| N | Փաստաթղթի անվանում | Չափանիշ |
|---|---|---|
| 1. | ՄՈՒՀ-ի նոր կանոնադրությունը փոփոխություններով | 1 |
| 2. | 2015-20թթ. ՌԾ | 1 |
| 3. | Ներկայիս ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույց | 1 |
| 4. | Պաշտոնների անձնագրերը | 2 |
| 5. | Հաստիքացուցակ և տարիֆիկացիա 2023-2024 ուստարվա, որն ուղարկվել է նախարարություն | 2 |
| 6. | Տարեֆիկացիա /վերջին 3 տարիների/ | 2 |

| | | |
|---|---|---|
| 7. | Նախահաշիվներ և կատարողականներ /վերջին 3 տարիների/ | 2 |
| 8. | Լրացուցիչ վարձատրված և խրախուսված դասախոսների ցանկ /վերջին 2 տարի/ | 2 |
| 9. | Մասնագիտությունների ներդրման համար համապատասխան հետազոտությունների վերլուծություններ | 3 |
| 10. | Ներկայացված 3 ՄԿԾ-ների ամբողջական փաթեթներ | 3 |
| 11. | Դիպլոմային աշխատանքներ, քննական հարցատոմսեր | 3 |
| 12. | Առաջադրված 3 ՄԿԾ-ների շրջանակներում տրամադրված առաջադրանքներ | 3 |
| 13. | ԱՀՈՒ-ի պրակտիկայի հաշվետվություններ, պրակտիկայի օրագրեր | 3 |
| 14. | Մոդուլային ծրագրեր, թեմատիկ պլաններ | 3 |
| 15. | Առաջադրված 3 ՄԿԾ-ների շրջանակներում մասնագիտական մոդուլներից ուսումնառության նյութեր, ուսումնառության պլաններ, գործնական առաջադրանքներ, մոդուլային ծրագրեր, գնահատման թերթիկներ | 3 |
| 16. | Այլ կրթական ծրագրերի պետական քննությունների հարցատոմսեր | 3 |
| 17. | Դիպլոմային աշխատանքներ, ռեֆերատներ | 3 |
| 18. | Դիմումներ, գրություններ, որոնք ուղարկվել են ՄԿՈՒԶԱԿ ՊԿՉ-ների վերանայման առաջարկներով | 3 |
| 19. | Ամփոփիչ ատեստավորման նախագահների հաշվետվություններ | 3 |
| 20. | Զբոսաշրջություն ՄԿԾ-ի լիցենզիայի փաթեթ | 3 |
| 21. | Ըստ ՄԿԾ-ների լիցենզիոն տեղերը և ուսանողների քանակը | 4 |
| 22. | Շրջանավարտների բազա՝ ըստ մասնագիտությունների /վերջին 5 տարիների/ | 4 |
| 23. | Կարիերայի կենտրոնի գործունեության կարգ | 4 |
| 24. | Դասախոսի մրցույթի արձանագրություն, հարցաշար | 5 |
| 25. | Մրցութային կարգով ընդունված դասախոսական կազմի թվաքանակ | 5 |
| 26. | Դասախոսական կազմի և ուսումնաօժանդակ կազմի քանակ | 5 |
| 27. | Ուսանողների շրջանում դասախոսներից բավարվածության հարցաշար, վերլուծություն | 5 |
| 28. | Գործատու դասախոսների քանակ | 5 |
| 29. | Դասալսումների արդյունքներ, վերլուծություններ | 5 |
| 30. | Վերջին 4 տարիների ընթացքում մեթոդական և մասնագիտական վերապատրաստում անցած դասախոսների քանակ՝ ըստ տարիների, ամբիոնների, վերապատրաստումների ոլորտների և թեմաների | 5 |
| 31. | ԱՀՈՒ պատասխանատուի հաշվետվությունը | 6 |
| 32. | Դասախոսական կազմի կողմից տպագրված հոդվածներ, ձեռնարկներ և այլ հետազոտական աշխատանքներ-: | 6 |

| | | |
|---|---|---|
| 33. | Լսարանների քանակ, գույքացուցակ | 7 |
| 34. | Տարբեր լաբորատորիաների, կաբինետների գույքացուցակներ | 7 |
| 35. | Ներկայացնել 2020 թվականից հետո իրականացված վերանորոգումները, ձեռք բերված նոր սարքավորումները: | 7 |
| 36. | Բոլոր ստորաբաժանումների հաշվետվություններ /վերջին 3 տարիների/ | 8 |
| 37. | Բուհերի և գործատուների ցանկ, որոնց հետ գործում է քոլեջը | 9 |
| 38. | Գործատուների հետ ունեցած պայմանագրեր, և այլ ՄՈՒՀ-երի հետ եղած հուշագրեր և պայմանագրեր | 9 |
| 39. | Գործընկեր կազմակերպությունների ցանկ | 9 |
| 40. | Համապատասխան վերլուծություն ՄԿԾ-ներում իրականացված փոփոխությունների արդյունավետության մասին | 10 |
| 41. | Որակի հարցումների վերլուծությունները | 10 |
| 42. | Ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի պատասխանատուի/ների պաշտոնի նկարագիր | 10 |
| 43. | Որակի պատասխանատուի և/կամ աշխատանքային խմբի պլանները և հաշվետվությունները | 10 |

## ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Ամբիոններ
2. Վարչական ստորաբաժանումներ (հաշվապահություն, Կադրեր, Որակի ապահովման և Կարիերայի լենտրոններ, ամբիոններ)
3. Գրադարան
4. Լսարաններ
5. Լաբորատորիաններ
6. Մասնագիտական կաբինետներ
7. Ուսուցչանոց

## ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ




## ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **ԱՀՈՒ կրթություն՝** Աշխատանքի վրա հիմված կրթություն
2. **ԿԳՄՄՆ՝** Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
3. **ՀԿ՝** Հասարակական կազմակերպություն
4. **ՀՀ՝** Հայաստանի Հանրապետություն
5. **ՄԱՎԵՏԱ՝**Հայաստանում գյուղատնտեսության ոլորտում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացում
6. **ՄԿԾ՝** Մասնագիտական կրթական ծրագիր
7. **ՄԿՈՒԶԱԿ՝** Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
8. **ՄՈՒՀ՝** Մասնագիտական ուսումնական հաստատություն
9. **ՄԿԾ՝** Մասնագիտական կրթական ծրագիր
10. **ՈԱԿ՝** Որակի ապահովման կենտրոն
11. **ՈՆԱ՝** Որակի ներքին ապահովում
12. **ՊԻԳԲ՝** Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
13. **ՊԿՉ՝** Պետական կրթական չափորոշիչ
14. **ՊՈԱԿ՝** Պետական կրթական չափորոշիչ
15. **ՌԾ՝** Ռազմավարական ծրագիր
16. **ՍՊԸ՝** Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
17. **ՈՒԽ՝** Ուսանողական խորհուրդ